

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24752

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԴՐԵԶԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ  
ՆՅՈՒԹԵՐԻ ՃՈՂՈՎԱՆՈՒ

331.88(47)

Դ-99

Ա Զ Ե Ր Ն Ե Շ Ր

ԲԱԳՈՒ—1932 թ.

331.880(2)

3-39

**ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ  
ՆՅՈԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

1. Պրոֆինամկենտխորհրդի հաշվետվուրյունը, զեկուցում ընկ. Շպերնիկի.
2. Խորհ. Միուրյան պրոֆմիուրյունների խնդիրները զարգացման ներկա ետապում, ընկ. ԿԱԳԱՆՈՎԻՉԻ նառը.
3. Պրոֆինամկենտխորհրդի Պրոֆինտեխում յեղած պատվրակուրյան հաշվետվուրյանը, զեկ. ընկ. ԼՈԶՈՎՍԿՈՒ.
4. Պրոֆմիուրյունների համ. IX համագումարի բանաձեռքը Պրոֆինամկենտխորհրդի հաշվետվուրյան առքիվ.

Ա Զ Ե Բ Ն Ե Շ Բ

ԲԱԳՈՒ—1932 թ.

23.07.2013

Հայաստանի  
Հանրապետության  
Տեղական կառավագական մասնակիցների



Հանձնված և տպարանին հունիսի 26-ին  
Ամփառման և աշխատանքը սեպտեմբերի 7-ին

Առաջարկական թերթերի թիվը 6  
Տպագրական թերթերի թիվը 6

## ՊՐՈՖՄԻՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՌՈՒԹԵ- ՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅ- ՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԿ. ՇՎԵՐՆԻԿԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

(Համառուսած)

Ընկ. Շվերնիկն իր զեկուցման առաջին մասում թվեր ու փաստեր ե բերում սոցիալիստական շինարարության հսկայական հաջողությունների և հնգամյակը չորս տարում կատարելու մասին: Նկարագրելով արտադրական վերելքի հոլակապ պատկերը Խորհրդային Միությունում և կրիզիսը՝ կապիտալիստական յերկը կը կը նելում, զեկուցողն ասում ե.

— Մենք հաղթանակել ենք, վորովինեաւ այդպես և բանվորների հեղափոխական կամքը զեպի հաղթանակը, այն բանվորների, վորոնք հնգամյակը կատարելու մասին կուսակցության արած կոչին պատասխանեցին իրենց շարքերի համախմբվածությամբ, պատասխանեցին աշխատանքային ենտուցիապմի հզոր աճումով, պատասխանեցին հնգամյակը չորս տարում կատարելու համար վճռական պայքարով:

Մենք մի բոլե անգամ չպետք ե մոռանանք, վոր հաղթանակները ձեռք ենք բերել լարված պայքարում: Մենք հասել ենք այդ հաղթանակներին միայն շնորհիվ նրան, վոր մեզ զեկավարել ե հավատարիմ դեկավարը — մեր փառապանձ բոլշևիկյան կուսակցությունը և նրա կենտրոնական կոմիտեն: Յեվ անպայման մեր կուսակցության հիմնական գծի հաղթանակի խոշորագույն պայմաններից մեկն ե հանգիսանում այն, վոր մեր կուսակցության գլուխն անսասան կերպով կանգնած ե Լենինի ամենահավատարիմ և հանձնարեղ աշակերտ, բանվոր դասակարգի առաջնորդ ընկ. ԱՏԱԼԻՆԸ (բուլն, լերկարատեկ ծափահարություններ):

Այնուհետև զեկուցողը մանրամասնորին բնորոշում է Պրոֆ-  
միությունների համամիութիւնական կենտրոնական խորհրդի  
աջ-ոպագործունիստական զեկավարության դեմ տարված պայքա-  
րի ետապները:

Աջերը, հակադրելով պրոֆմիությունների «պաշտպանելու»  
փունկցիաները սոցիալիստական շինարարությանը նրանց մաս-  
նակցելու խնդիրներին, դրանով թուլացնում եյին միություն-  
ների աշխատանքը նաև բանվորների նյութական մակարդակը  
բարձրացրելու նկատմամբ:

— Պրոֆմիությունների համամիութ. կենտրոնական խոր-  
հրդի ուղղործունիստական զեկավարությունը անձնատուր և  
յեղել սոցիալիստական ռեկոնստրուկցիայի դժվարությունների  
առաջ և պրոֆմիությունները կուսակցության հակադրելու ամե-  
նավտանգավոր գիծն և տարել: Պրոֆմիություններում կուսակ-  
ցության դեմ իրանց մզած պայքարում աջերը գրավել, եյին ըստ  
եյության մենչենիկան դիրքեր, հակադրելով պրոֆեսիոնալ շարժ  
ման շահերը—պրոլետարիատի ընդհանուր գասակարգային շահե-  
րին—պրոլետարիատի դիկտատուրայի շահերին:

Մեր կուսակցության կենտրոնի հաստատակամ բոլշևիկյան  
միջամտությունը պրոֆշարժման զեկավարության դործին՝ վերջ  
տվեց նախկին ուղղործունիստական զեկավարության այդ կոր-  
ծանարար քաղաքականությանն ու պրակտիկային:

Պրոֆմիությունների չամկենտրոնը նոր զեկավարության  
առաջ հարց եր դրվել՝ լիովին ապահովել պրոֆշարժման մեջ կու-  
սակցության հիմնական գծի կիրառումը:

Պետք եր ամենակարճ ժամանակում վերջ տալ այն ուղղոր-  
ծունիստական ու տրեղ-յունիսիոնիստական ժառանգությանը, վո-  
րը մնացել եր նախկին զեկավարությունից, պետք եր արմատա-  
պես վերակառուցել պրոֆմիությունների աշխատանքի սոցիա-  
լիստական ռեկոնստրուկցիայի պահանջների համաձայն:

Պրոֆմիությունների Խ-րդ համագումարում մենք համարձակո-  
ւեն կարող ենք հայտարարել, վոր խորհրդային պրոֆմիությունները  
պատվով կատարել են այն խնդիրները, վոր դրել ե նրանց առաջ  
կուսակցությունը (ծափահարություններ):

Ցես պետք ե առանձնապես ընդգծեմ, վոր չնորհիվ դասա-  
կարգային պայքարի սրման, պրոֆմիությունների աշխատանքում

բուրժուական ու մանր-բուրժուական տարրերը հետագայում կա-  
կփորձին ազգել բանվոր դասակարգի առանձին խավերի վրա,  
դրանով իսկ ստեղծելով դժվարություններ մեր աշխատանքում:

Այդ պատճառով պրոֆմիությունները պետք ե առանձնա-  
պես զգաստ լինեն և ամենավճռական պայքար մղեն աջ-ոպոր-  
տունիստական, տրեղ-յունիսիոնիստական տարրերի և «ձախ»  
ծռումների դեմ պրոֆմիությունական կազմակերպությունների  
աշխատանքում:

Ոպպորտունիստական տարրերը գեռս պահպանվել են  
պրոֆշարժման ապարատում և դիմագրություն են ցույց տալիս  
պրոֆմիությունների աշխատանքի վերակառուցմանը: Նրանք  
արտահայտում են բանվորական մասսաների աճող ակտիվու-  
թյունը՝ սոցմքցումն ու հարվածայնությունը զեկավարելու մեջ,  
իրանց միացրած բանվորական մասսաների անմիջական կարիք-  
ների սպասարկմանը վերաբերող իրենց խնդիրները մոռացու-  
թյան տալու մեջ:

Պետք ե ուժեղացնել պրոֆմիությունների պայքարը ոպ-  
պորտունիզմի բոլոր տեսակների դեմ և հաշտվողական վերաբեր-  
մունքի դեմ դեպի նրանց: Համախմբելով իրենց շարքերը կու-  
սակցության հիմնական գծի համար մղվող պայքարում, պրոֆ-  
միությունները պետք ե ապահովեն կուսակցության կողմից մեր  
յիշկրի բանվոր դասակարգի առաջ դրած սոցիալիստական շինա-  
րաբության խնդիրների հաջող իրագործումը:

## ՄԻԼԻՈՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆՏՈՒԶԻԱԶՄԸ

Պրոֆմիությունները VIII-րդ համագումարից հետո, մանա-  
վանդ ԽVI-րդ կուսակցական համագումարից հետո անցած ետա-  
պը, պրոֆմիությունների՝ «յերեսը դեպի արտադրություն» վճա-  
կան շրջադարձի ետապն և յեղել: 1929 թ. կուսակցության և  
Խորհրդային իշխանության ընդունած տնտեսական շինարարու-  
թյան հնգամյա պլանը գարձել ե մեր պայքարի ծրագիրը: Հնգամ-  
յա պլանն իր իրազրծման համար պահանջել ե բանվոր դասա-  
կարգի ուժի, կամքի և յեռանդի հսկայական լարում:

Հնգամյակի առաջին տարին յեղել ե սոցիալիստական մըր-  
ցության ծավալման տարին: Սոցիալիստական մքցությունը ա-  
մենապայծառ արտահայտությունն և հանդիսանում այն նոր ար-

տաղբական հարաբերությունների, վորոնք առաջացել են պրոլետարիատի դիկտատորայի հաղթանակի հետևանքով, սոցիալիստական արդյունաբերության գարզացման հիման վրա:

Պրոֆմիությունների հին ղեկավարությունը մի կողմ թողեց բանվորական մասսաների աշխատանքային վոգեռությունը։ Այն հանդամանքը, վոր նա փորձեց ձեռք քաշել սոցմրցման ղեկավարությունից, վորպես «պրոֆմիություններին վոչ հատուկ ֆունկցիայից», անչափ խիստ կերպով արտահայտում ե հին ղեկավարության նեխված ոպպորտունիտական բնույթը։ Մինչև 1-ի հունվարի 1932 թ. սոցմրցումն ընդգրկել ե բոլոր բանվորների 72 տոկոսը։ Ինժեներների մեջ ունենք 39 տոկոս հարգածայիններ։

Բանվոր դասակարգի արտադրական ակտիվության և ստեղծագործական ենտուզիազմի ահագին վերելքը, վոր ապահովել և սոցիալիստական շինարարության հսկայական հաջողությունները՝ ապացուցում ե, վոր ԽՍՀՄ-ում բանվորների ահագին մասնակի ամառ աշխատանքը դարձել ե «պատվի գործ, փառքի գործ, քաջության ու հերոսության գործ»։

Ո՞վ չկերե Սագագեկի և Գալիխուինի հարգածային բրիգադի հերոսական աշխատանքը, վորոնք համաշխարհային ոեկորդներ են տվել բետոն դնելու, տուրբինների մոնտաժի և այլն գործում։ Բայց այս որինսակը միակը չե Բավական ե բերել այսպիսի թվեր։ Դնեպրոստրոյում պլանով պետք եր դնել 427 հազարական աշխատանքը, վորոնք համաշխարհային ոեկորդներ են տվել բետոն դնելու, տուրբինների մոնտաժի և այլն գործում։ Բայց այս որինսակը միակը չե Բավական ե բերել այսպիսի թվեր։ Դնեպրոստրոյում պլանով պետք եր դնել 500 հազար խողար խորանարդ մետր բետոն, իսկ բանվորները 500 հազար խորանարդ մետրի հանդիպական պլան են առաջադրել։ Բրիգադների հերոսական պայքարի հետևանքով 500 հազարի տեղ գրվել ե 518 հազար խորանարդ մետր։ Դնեպրոստրոյի առաջին առուրբինի մոնտաժը տնտեսավարների պլանով ընդունած 90 որվա փոխարեն վերջացած ե 36 որում։ Կարելի ե անվերջ որինակներ բերել վորոնք բնորոշում են բանվորների հերոսությունը։

## ՏՆՏԵՎԱՇՎԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՄԻԶՈՑՈՎ ԴԵՊԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Յեթե մինչև 1-ն փետրվարի 1931 թ. ԽՍՀՄ-ում հաշվում են միայն 10 տնտեսահաշվային բրիգադ, ապա մինչև 1932 թվի ապրիլի 1-ը՝ նրանց թիվը հասնում ե 155 հազարի։ Համատրած ապրիլի ձեռնարկների և ցեղերի թիվն անընդհատ աճում է։

Այս թվերը պետճախոս կերպով վկայում են իրենց մասին։ Նրանք խոսում են այն մասին, վոր բանվոր գանակարգը սեղծում ե աշխատանքի կազմակերպման նոր, ավելի բարձր ձեմեր, վարոնք հնարակություն են տալիս ավելի յեվս լայնորեն ներգրավել բանվորական մասսաներն արտադրության անմիջական կառավարման մեջ։ Զկա արդյունաբերության վոչ մի ճյուղ վորտեղ չզարդանան տնտեսաշվային բրիգադաները, վորպես սոցմրցման հիմնական ձեւ, վորպես աշխատանքի կազմակերպման ավելի կատարյալ ձեւ ձեռնարկության մեջ։

Տնտեսաշվային բրիգադաները վորակյալ կազմակերպչական ու տեխնիկական ղեկավարությամբ ապահովելու պահանջը կոնկրետ խնդիր ե առաջադրել՝ հատուկ գասընթացներում վերապատրաստել 100 հազար բրիգադիր։ Հետեւապես բանվորների ահագին խավեր առանց ստանոկից կարվելու բարձրանում են ավելի բարձր աստիճանի։ 100 հազար բանվորներ կանգնում են արտադրության անմիջական ղեկավարների շարքերում։

Այստեղ սկսվում ե պրոֆմիությունների ամենախսկական աշխատանքը՝ առաջ քաշել դեպի վարչական տնտեսական պաշտոններ այն բանվորներին, վորոնք անմիջապես անցել են դըպրոցն արտադրության մեջ։ Դրանով լայնանում են մեզ համար անչափ կարեւոր ստորին տեխնիկական պերսոնալի կադրերը։ Մենք պես ե տանապատկենք պրոֆմիությունների աշխատանքն այս բնագավառում այնպիս, վոր արտադրության գործնական դպրոցն անցած ակտիվ հաշվածայիններին ամենակարև ծամանակում տեսականորեն պատրաստենք յեվ դնենք հրամանատարական բարձրությունների վրա ձեռնարկության մեջ, զործարանում, ցեխում։

Մեր տնտեսաշվային շարժման մեջ հանագին նվաճումների հետ միասին կան նաև խոզոր թերություններ։ Տնտեսաշվային բրիգադաների արագ քանակական աճմանը շատ տեղերում գեռ ևս չի ուղեկցում նրանց վորակական ամրապնդումը, տնտեսաշվային բրիգադների աշխատանքի վորակը շարունակում ե հետ մեալ։

Տնտեսաշվային շարժման հետագա ծավալման կարևորագույն պայմանը հանդիսանում ե անխնա պայքարը նրանց գեմ, վորոնք թերազնահատում են տնտեսաշվային բրիգադաների նշանակությունը, վոր բանվոր գանակարգի կարեւորագույն նվա-

ճնկ. Ստալինի վեց ցուցմունքների իրակործման, մասսայական տնտեսաշխատ ներքելից արմատացնելու համար նրա մըղած պայքարում: Պրոֆմիությունները պետք ե զարկեն նրանց ձեռքին, ովքեր փորձում են մերկ վարչադրության ճանապարհով բուցնել տնտեսաշվային բրիգադաներ: Կարելի ե բերել մերշարք որինակներ, յերբ տնտեսավարը, փոխանակ պրոֆմիության հետ միասին բանվորներին կազմակերպելու, իր համար ավելի հարմար ե համարում գործարանում հրաման հրատարակել, վորը սահմանվում ե, թե այս ինչ գործարանում մինչև այս ինչ ժամը պետք ե կազմակերպվի այսքան տնտեսաշվային բրիգադ: Դա այն ուղին չե, վորով մենք պետք ե ընթանաք: Դա բառը բոլորատական ուղին ե, վորին պետք ե ամենավճռական պայքարը հայտարարել: Մյուս կողմից պետք ե ամբողջ ուժով հարվածել այն պրոֆմիությունականներին, վորոնք չեն հասկանում վոր տնտեսաշվային բրիգադը, վորպես աշխատանքի կազմակերպության ավելի կատարյալ ձև, կարող ե կիրառել իր բոլոր առավելությունները միայն այն ժամանակ, յերբ նա կապված ե ու կառուցված ե, իենելով հենց տեխնոլոգիական սլոցեսի սկզբունքներից:

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԼԱՆՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ծավալելով սոցմրցումն ու հարվածայնությունը, բանվորդասակարգը ընդուալ և մոտեցել արտադրության պլանավորման անմիջական մասնակցությանը: Այստեղից—հանդիպակած արդիքինալլանների հզոր զարգացումը: Հանդիպակած արդինալլանը բանվոր դասակարգի մասսայական մասնակցության ձևն է հանդիսանում ժողովրդական տնտեսության պլանավորմանը:

Բանվոր դասակարգի կամքը՝ կատարելու և գերակատարելու 1932 թ. պլանը և հնգամյակը չորս տարում՝ իր արտահայտությունն է գտել սև մետաղագործության բանվորների վորոշման մեջ 1932 թվի պլանից գուրս ապահովել միլիոն տոնն չուզումի ձուլումը: Միայն 15 գործարաններում կազմակերպվել են 7105 պլանային-ոպերատոր խմբեր, վորոնց մեջ 31.851 բանվոր մասնակցել են հանդիպակածի մշակմանը:

Լրացուցիչ մի միլիոն տոնն չուզուն տալու հնարավորությունը հաստատված ե և տեխնիկապես հիմնավորած մետաղաձուլական արդյունաբերության ձեռնարկների մեծամասնության կողմից:

Սակայն պետք ե ասեմ, վոր այն գործարանների մեջ, վորոնք իսկապես բոլշևիկորեն պայքարում են հանդիպական արդիքինալլանի համար սև մետաղագործության մեջ, կան նաև այնպիսի գործարաններ, վորտեղ հանդիպակած պլանի կատարման գործը գեռես չի գարձել կենտրոնական խնդիր:

Աև մետաղագործության նկատմամբ հանդիպական պլանը չի իրակործվում, չնայած վոր անցյալ տարվա հետ համեմատած չուզունի ձուլումը զգալի չափով ավելացել ե: Ինչու տեխնիկապես հիմնավորված հանդիպակած պլանը չի կատարվում, վորոնք են դրա պատճառուները: Պատճառուները նրանումն են, վոր մետաղաձուլական գործարանների բանվորներն, առաջադրելով հանդիպակած պլանն, պահանջել են մի շարք պայմաններ, վորոնք անհրաժեշտ են հանդիպակածը կատարելու համար:

Առ այժմ բոլոր այդ պայմանները բոլորովին անբավարար են կատարվում:

Գլխավորապես դրանով ե բացատրվում հանդիպակածի չկատարելու սև մետաղաձուլությունն նկատմամբ: Այս գրությունն իր ամբողջ ուժով հաստատում է ընկ. Ստալինի ցուցմունքը՝ գեկավարել չկարողանալու, մեր արտադրական պլանները կատարելու և գերակատարելու համար ունեցած հնարավորությունները լրիվ ոգտագործելու մասին: Այստեղից պարզ ե պրոֆմիությունների անելիքը սև մետաղաձուլության պլանը կատարելու համար: Անհրաժեշտ է լարել բոլոր ուժերը, վորպեսզի անպատճառ կատարվեն բոլոր այն պայմանները, վորոնք առաջադրվել են բանվորների կողմից հանդիպակածի մշակման ժամանակի: Բանվորների այդ պայմանները հաստատորեն պահանջում են, վոր պրոֆմիություններն ու տնտեսորդաները համառորեն պայքարեն աշխատանքի լավագույն կազմակերպման համար, ընկ. Ստալինի 6 պայմանների իրագործման համար: Դրա ու միմիայն դրա մեջ ե հաղթանակի գրավականը, դրա մեջ և սև մետաղաձուլության պլանների իրագործման յերաշխիքը:

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԼԻԱՐԴ ՌՈՒԲԼԵ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ

Պրոֆմիությունները հաշվետվական ժամանակաշրջանում արմատապես վերակազմել են արտադրական խորհրդակցությունների աշխատանքի ձևերը, մեթոդները և բովանդակությունը՝ սոցմրցման ու հարվածայնության ղեկավարության ամրապնդման համար մղած պայքարում։ Դրանով իսկ պրոֆմիությունները՝ արտադրական խորհրդակցությունները դարձել են սոցմրցման ղեկավարության իսկական կենտրոններ, բանվորական մասսաների անմիջական մասնակցության դպրոցներ՝ արդյունաբերությունը կառավարելու գործում։

Արտադրական խորհրդակցության մեջ նորմ ամենից առաջ կայանում են նրանում, վոր նրանց աշխատանքի ծանրության կենտրոնը փսխադրվել ե բրիգադներն ու գրուպպաները։ Դա ապահովել ե արտադրական խորհրդակցությունների մասսայականությունը և նրանց մեջ բանվորների ընդգրկման դգալի աճումը։

Ուրարդական խորհրդակցությունների աշխատանիքի ամրապնդումը ցեխում, բրիգադայում առաջ և բերել մասսայական ռացիոնալիզացուական ու զյուտարարական շարժման լայն ծավալում յեն բանվորների ստեղծագործական նախաձեռնության վերելք։

Այսպես, որինակ, Ժողովական կուսակցությունների 57 միացություններում, վորտեղ հաշվում են 1.800.000 բանվոր, 1930 թ. մտցրված 273.000 բանվորական առաջարկությունների շնորհիվ ստացած խնայողության գումարը 1931 թ. առաջին կեռամսյակում կազմել է 5 միլիոն ռուբլի, ինչը ըստ բանվորական մեջ՝ 6.247.00 ռ. և յերրորդ կեռամսյակում 11.574.000 ռ։

Խնդուստրիալ միությունների գրուպպայի 917 ձեռնարկում՝ 1931 թ. IV-րդ կեռամսյակում խնայողություն տված առաջարկությունների թիվը կազմել է 13.677 և մի տարվա խնայողության գումարը կազմում է 33.245.773 ռուբլի։

Բանվորական գյուտերի և կատարելագործությունների առաջարկությունն 2 տարվա ընթացքում ավելացել է 3 անգամ։ Պյուտերի և կատարելագործությունների իրականացումից միության ժողովրդական տնտեսությունը հարսուր միլիոնավոր ռուբլի խնայողություն է ստանում։

1931 թվին բանվոր-գյուտարարների կենխսդրանի ընկերությունը պարտավորվել է տալ 100 միլիոն ռուբլու խնայողություն և տվել է 102 միլիոն ռուբլու, չուսւխային՝ կովկասի ընկերությունը պարտավորվել է տալ 50 միլիոն ռուբլու և տվել է 109 միլ. ռուբլու խնայողություն, Աքւմտյան շրջանը տվել է 20 միլ. ռուբլու խնայողություն և այլն։ Պյուտարարների ընկերության 1-ին համամիությունական համագումարը պարտավորաթյուն է վերցրել—1932 թ. ընթացքում գյուտերից և կատարելագործություններից 1 միլիարդ ռուբլու խնայողություն տալ յերկրին, մինչդեռ պլանով Ժողովական կուսակցությունը ամբողջ արդյունաբերության համար նշվում է գյուտերից ու կատարելագործություններից ստանալ միայն մինչև 300 միլ. ռուբլ։

Կարենի և լիակատար վասահուրյուն հայտնել, վոր բանվոր զյուտարների ընկերության առաջին համագումարի ընդունած պարտավորաթյունները կկատարվեն։ Դրան յերաշխիք են հանդիսանում լայն ձեռներցությունը, բանվորության մեջ զյուտարարական շարժման լայն անումբ։

Սակայն գեռես հիմա ել այդ գործում կան շատ խոշոր թերություններ։ Պյուտերի և կատարելագործությունների ռեալիզացիան չափազանց թույլ է դրված։ Ցուրաքանչյուր տարի ոգտակար գյուտերի և կատարելագործությունների 30—40 տոկոսը մնում է չիրագործված։ Շնորհիվ նրան, վոր գյուտարարությունները ժամանակին ու լրիվ կերպով չեն իրագործվում, միության ժողովրդական տնտեսությունը հարյուր միլիոնավոր ռուբլու խնայողություն է կորցնում։ Բանվոր-հարվածայինների նյութական խրախուսումը դեռևս հարկ յեղած բարձրության վրա չի կանգնած։

Պրոֆմիությունները միշտ վճռական պայքար չեն մղում բանվորական առաջարկությունների իրագործման և բանվորներին պերսիստ տալու համար և այդպիսով խթան չեն ստեղծում բանվոր գատակարգի ամենալայն մասսաների մեջ՝ ուսացիոնալիզատորական շարժումը զարգացնելու համար։ Մենք պետք ե բոլոր պրոֆմիությունների առաջ խնդիր դնենք՝ ստեղծել բանվորների համար նյութական խրախուսում։

## ՊՐՈՓՄԻՌԻԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՐՈՒՄ

Առանձնապես պիտք ե շեշտել պրոֆմիությունների դերը գյուղական տնտեսության կոլեկտիվացման բնագավառում: Դուք գիտեք, վոր աջ ուղղությունները քերազնահանակ են սովորությունը շինարարությունը յև կոլխոզային շարժման ու պրոլետարիատի կազմակերպիչ դերը գուղացնեսության վերակառուցման մեջ: Այս բոլոր բիուտմ եր Պրոֆմիությունների Համկենտիորնի նախկին դեկադարության ընդիմանուր աջ ուղղությունիսական գծից:

Պրոֆմիությունների Համկենտիորնի նոր զեկավարությունը ահագին նշանակություն եր տալիս բանվոր դասակարգի արտադրական գողման ամրապնդմանը գյուղացիության աշխատավորական մասսաների հետ՝ գյուղատնտեսությունը կոլեկտիվացման ռելիների վրա դնելու համար: Կոլխոզների կազմակերպչատնտեսական ամրապնդման համար պրոֆմիություններն ոգտագործել են միլիոնավոր պրոլետարների կազմակերպված հզորությունը և նրանց կուտակած արտադրական փորձը աշխատավոր սոցիալիստական կազմակերպման մեջ:

Հաշվետվական ժամանակամիջոցում պրոֆմիություններն կոլխոզային շարժմանն ոգնելու համար ուղարկել են 25 հազար գաղափուցն բանվորներ, ֆաբրիկների ու գործարանների հասկուցն արտադրողականներ: 25 հազարականները բացառիկ դեր են խաղացել գյուղատնտեսությունը նոր սոցիալիստական ուղղությամբ վերակառուցելու մեջ (ծափահարություններ):

Յերկրագործության սոցիալիստական վերափոխությունը և կուլակության, վորպես դասակարգի լիկվիդացիան արմատական փոփոխություններ են մտցրել գյուղատնտեսական պրոլետարիատի կազմի մեջ: Յերե մինչև 1930 թ. ոգոստոսի 1-ը կուլակային տնտեսություններում աշխատող բատրակների թիվը Մոսկվայի շրջանում լեղել է 3.758, Հայաստանում—1705, Խանովյան շրջանում—3.533 հոգի, ապա մինչև 1931 թ. ոգոստոսի 1-ը այս շրջաններում ու հանրապետություններում չկա վոչ մի բատրակ:

1931 թ. արդյունաբերության մեջ են ներգրավված միայն 22 լրաններում 133.506 բատրակ, սովորությունների մեջ—23.589 մարդ, կոլխոզների մեջ—146.506 մարդ:

Սակայն անհրաժեշտ ե ամենայն խստությամբ նշել այն խոշորագույն թերությունները և ուղղակի աղավաղութերը, զյուղատնտեսության մեջ տնտեսական ու պրոֆմիությունների կազմակերպությունների աշխատանքի պրակտիկայում: Բավական ե հիշեցնել «Սոյուզախարի» սովորությունների և մի շարք անասնապահական ու հացահատիկային սովորությունների արդյունք ների մասին և մի շարք ՄՏԿ աշխատանքի թույլ դրված լինելու մասին, վորպեսզի համոզվել այդպիսի խոշորագույն թերություններ գոյության մեջ:

Անդիմության, կագրերի հոսունության, մեքենաների պրոստոյների, վառելիքի գերածախսի, մի շարք ՄՏԿ-ներում մեքենաները կոտրելու դեմ պայքարելու բացակալությունը, գեռակա թույլ մասսայական աշխատանքը կոլխոզների մեջ՝ ՄՏԿ-ների արտադրական խնդիրների շուրջը կոլխոզային հասարակայնություն ստեղծելու համար, այս բոլորը վկայում են, զյուղական տնտեսության մեջ պրոֆմիությունիսական կազմակերպությունների աշխատանքում ոպպորտունիսական խեղաքյուրումնեների մրնացորդների մասին: Այս բոլորը խոսում ե այն մասին, վոր մասսաները դեռեվս ինչպես հարկն է մօրիխզացիայի չեն յենրարկված սովորությունների մասին ու կոլխոզային շինարարությունների շուրջը:

Պրոֆմիությունները պիտք ե ուժեղացնեն պայքարը ոպպորտունիզմի մնացորդների դեմ և մօրիխզացիայի լինթարկեն գյուղատնտեսական պրոլետարիատի մասսաները՝ լիովին կատարելու ու գերակատարելու սովորությունների և ՄՏԿ-ների արդիքինպահները, կոլխոզների կազմակերպչատնտեսական ամրապնդման համար:

## ԽՍՀՄ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ-ԿԵՆՑԱՆԱՀԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Սոցիալիստական տնտեսության զարգացման ահագին հողությունները տեխնիկական բազա են ստեղծել բանվոր դասակարգի և աշխատավորության նյութական ու կինցաղային բարեկեցության անշեղ աճման համար:

VII, VIII և IX համագումարների մեջ լնկած ժամանակաշրջանում բանվորների միջին ամսական աշխատավարձի աճումը բնորոշվում է հետևյալ տվյալներով: 1928 թվի համեմատությամբ ար-

գյունաբերության մեջ միջին ամսական աշխատավարձը 1931 թ. ավելացել է 35,3% և կազմում է 70 ռ. 25 կ. փոխարեն 96 ռ. 15 կ., 1932 թ. նշած է միջին աշխատավարձը հասցնել 101 ռ. 10 կ., դրը 1928 թ. համեմատությամբ տալիս է 51% ավելացում:

Խորհրդային Միության բանվորի բյուջեն վորոշվում է վոչ միայն անհատական աշխատավարձով, այլ և թե բանվորի և նրա ընտանիքի ձրի ուսման ապահովումով պետության հաշվին, ձրի բժշկական ոգնությամբ, սոցալահովագրությամբ և այլն: Յես, վորպես որինակ կերեմ այդ ծախսերի մի քանի հոգվածները, ցույց տալու համար, թե ինչպես են նրանք ազգում բանվորի բյուջեյի մակարդակի վրա:

1929 թվին մի բանվորի սոցիալական ապահովագրության ծախսերը կազմել են 37 ռ. 32 կ., իսկ 1932 թվի պլանով այդ ծախսը աճում է ու հասնում 40 ռուբլու: Լուսավորության նկատմամբ այդ ծախսը 1929 թ. կազմել է 14 ռ. 50 կ., իսկ 1932 թ. յենթադրվում է հասցնել 44 ռ. 40 կ.: Բժշկական ոգնության նկատմամբ մի բանվորի ծախսը 1929 թ. կազմում եր 23 ռ. 07 կ., իսկ 1932 թ. նշած է հասցնել 40 ռ. 90 կ. և այլն:

Յեթե 1929 թվին բոլոր տեսակի նպաստների նկատմամբ մի բանվորի համար արվող ծախսը կազմում եր 113 ռ. 27 կոպ., ապա 1932 թվի համար ծրագրված է այդ ծախսը հասցնել 200 ռ. 13 կ.

Պետք է ուշադրության առնել, վոր շնորհիվ գործազրկության լիկվիդացիայի բանվորական ընտանիքի ինկամուտն աճում է ի հաշիվ նրան, վոր արտադրության մեջ են քաշվում. նաև ընտանիքի անդամները: Յեթե 1928 թվի նոյեմբերի տվյալների համաձայն բանվորական ընտանիքում աշխատողների թիվը կազմում եր 1,26 մարդ, ապա 1931 թվի նոյեմբերին ընտանիքում աշխատողների թիվը հասել է 1,56 մարդու: Այդպիսով այս ժամանակաշրջանում բանվորի ընտանիքի բյուջեն աճել է 53 տոկոսով, իսկ անհատական աշխատավարձն ավելացել է 35,3%:

Հնդամյակի իրագործման համար մղվող պարագաները և վերակառուցել աշխատավարձի սիստեմը՝ անդիմությանն, հալասարանքին վերջ տալու հիմունքով:

Պրոֆմիությունների Համկենտխորհի նախկին աջ-ռպարտունիստական ղեկավարությունն աշխատավարձի նկատմամբ մանր-քուրժուական հավասարանքի քաղաքականություն և տարել վոչ միայն վրակացալ և վոչ-վրակացալ աշխատանքի մեջ, այլ և արդյունաբերության զանազան ճյուղերի մեջ: Այդ քաղաքականության ուղղակի հետեւանքն ե այն յեղեւ, վոր քարածուխային արդյունաբերությունն աշխատավարձի տեսակետից 1927—28 թ. գտնվում եր 14-րդ տեղում, սև մետաղածուլությունը—տասերը տեղում, հիմնական քիմիան—ինները տեղում: Իսկ ուստինի, պոլիգրաֆիական, կարի և թեթև արդյունաբերության այլ ճյուղերում աշխատավարձն ավելի բարձր եր:

Պրոֆմիությունների Համկենտխորհի նոր ղեկավարությունը և միությունների կենտրոնները, այս ոպպորտունիստական ժառանգություն գեմ մղած պայքարում վորոշ հաջողությունների են հասել: Աշխատավարձը կարգավորելիս հաստատուն գիծ և վերցրվել—առաջին տեղերը բաշել արդյունաբերության առաջատար ճյուղերը:

## ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ԿՐՈՊԵՐՍՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ԲԱՐԵԼԱՎԵԼ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐՁԻՄԸ

Վերջին տարիներում զգալի չափով ավելացել է արդյունաբերական առլրանքների և սպառողական մթերքների արտադրությունը:

Գոտնամանների արտադրությունը, վոր 1928 թ. հավասար է յեղել 26,8 միլիոն զույգի, 1932 թվին (պլանով) հասնում է 90 միլիոն զույգի: Կրկնակոշիկների արտադրությունը, վոր 1928 թվին յեղել է 37 միլիոն զույգ, 1932 թվին հասնում է 74 միլիոն զույգի: 1932 թվի համար նշած է արտադրել 3.064 միլիոն բանակի գործվածքներ, մինչեւ 1929—30 թվին յեղել է 2.530 միլիոն:

Մնադի արդյունաբերության արտադրանքը 1930 թվի համեմատությամբ ավելացել է 26,4%: 1932 թվի համար ծրագըրված է ավելացնել ևս 36%:

1928 թ. արտադրվել է 25 միլիոն ոռորլու պահածոներ, 1931 թվին—110 միլիոն ոռորլու, իսկ 1932 թվի համար նշած է արտադրել 200 միլիոն ոռորլու: 1928 թվին արտադրվել է 14

միլիոն ցենտներ շաքար, 1931 թվին—18 միլիոն ցենտներ, իսկ 1932 թվին նշած ե արտադրությունը՝ 22 միլիոն ցենտներ:

Գյուղական տնտեսության և թեթև ու սննդի արդյունաբերության աճումը ստեղծել ե բոլոր պայմանները բանվորներին սննդամթերքներ և արդյունաբերական ապրանքներ մատակարարելու գործն ավելի ևս բարելավելու համար։ Հարց է ծագում. ինչու, չնայած լայն գործածության ապրանքների արտադրության այդպիսի խոշոր աճմանը, բանվոր դասակարգի առաջարած ամբողջ պահանջը մինչև հիմա չի բավարարվում։ Դա նախ և առաջ բացատրվում ե բանվոր դասակարգի հսկայական աճումով։ Անձեռ են նաև բանվոր դասակարգի պահանջները։ Դա մեր առաջ ինդիք և զնում ծանր արդյունաբերության զարգացման հետ միասին ուժեղացնել թեթև ինդուստրիայի ծավալման տեմպերը։

Պրոֆմիությունների Համկենտխորհը մեծ ուշագրություն է հատկացրել բանվորական մատակարարումը բարելավելու հարցերին: Բայց ամբողջ խստությամբ պետք է ընդգծել վոր պրոֆմիությունները դեռևս ընդհուպ չեն մոտեցել կոռուկացիայի վերակառուցմանը, վորի աշխատանքը մինչև հիմա ել չափազանց անբավարար է:

Դուք ինքներդ զիտեք այն այլանդակությունների մասին, վորոնք գեռաւ կան կոռպերատիվ որգանների աշխատանքի մեջ:

Փաստերն ասում են, վոր պրօֆմիությունները դեռևս իսկական բոլշևիկյան պայքար չեն մղում այդ բոլոր թերությունների դեմ: Այստեղ մենք դեռևս անսօսիման աշխատանք ունենք կատարելու:

Բանվորների մատակալարաբումը բարելավելու ամենակարևոր  
միջոցն է հանդիսանում հասարակական սնունդը։ Հասարակա-  
կան սնունդի ցանցը շարունակ աճում է։ 1928 թվին յեղած  
1,856 ճաշարաններ նա 1932 թվի սկզբին հասել է 16,998 ճաշա-  
րանի։ 1932 թվի վերջին հասարակական սնունդը պետք է ընդ-  
դրկե 131½ միլիոն մարդ, մինչդեռ 1928 թվին ընդդրկել է  
1,250,000 հզի։ Հասարակական սննդի գործում ներդրած կապի-  
տալը 1931 թվին հասել է 60 միլիոն ռուբլու 1928 թվի 17 միլ-  
լիոնի դիմաց։

Այս ժամանակաշրջանում առաջ են յիկել որինակելի ճաշաբաններ, ինչպես, որինակ, Մուկվայի առաջին գործարան-խոհանոցը, «Սերպ և Մոլոտ» գործարանի ճաշարանը Խարկովում, Դնեպրոպետրովսկի ճաշարանը, Լուգանստրոյի ճաշարանը և շատ ուրիշները։ Այդ ճաշարաններում էրթերին վերջ ե տրված, ավելացրված ե ճաշեր բաց թողնելու ունակությունը, բարձրացրված ե սննդի վորակը և լավացրված ե սանիտարական դրությունը։

Վերջին տարիներում հասարակական սննդի ծավալման  
բնագավառում մենք ունեցել ենք շատ նշանովոր հաջողություն-  
ներ: Բայց մեծ սխալ կլիներ կարծել վոր այս ասպարեզում  
մեղ մոտ ամեն ինչ բարեհաջող է: Մի շարք արդյունաբերական  
ու այլ ներում, չնայած նրան, վոր բանվորական ճաշարանները  
բավարար չափով մատակարարվել են՝ մթերքներով՝ հասարակա-  
կան սննդի գրվածքը չափազանց վատ է: Անտնտեսավարությու-  
նը, հակասանիտարական գրությունը, կելտը, հերթերը և շատ  
այլ բաներ գեռևս մեր շատ ճաշարանների «սեփականու-  
թյունն» են կազմում:

Պետք ե ավելի ուշադրություն դարձնել ճաշի փորակը լավաց-  
նելու վրա, բանվորներին ու նըանց ընտանիքներին հասարա-  
կական սննդի աշխատանքի ստուգմանը մասնակից դարձնելու  
վրա: Այս պրոֆմիությունները, վորոնք միացնում են ճաշարան-  
ների և փաբրիկ-խոհանոցների համար սարքավորում պատրաս-  
տող գործարանների բանվորներին, պետք ե ապահովեն այդ  
գործարանների արտադրական պլանների լիովին կատարում:

Կառպերացիայի քաղաքամերձ տնտեսությունները կարևորագույն աղբյուր են դառնում բանվորների մատակարարումը բարելավելու համար:

Պրոֆմիությունները մեծ աշխատանք են տարել քաղաքամիրձ անտեսության ծավալման գործում:

Քաղաքամերձ տնտեսությունների ամբողջ արտադրանքը  
հիմնականում պետք է հանդիսանա վորպես լրացուցիչ մատակա-  
րարում պլանային նորմաներից վեր: Սակայն մատակարարման  
տեղական որդանները, հակառակ կառավարության վորոշումների  
շատ հաճախ կոռպերացիայի անսանապահական ու կաթ-  
նային ֆերմաների արտադրանքն ոգտագործում են բոլորովին  
այլ նպատակների համար:



Պրոֆմիությունները միշտ ու ամեն տեղ վճռական հակառակված չեն տալիս դրան։ Պետք ե այնպես անել, վոր կոռպերացիայի բոլոր ֆերմանների ապրանքային արտադրանքը ցաք ու ցրիվ չարվի, այլ գործադրվի, վորպես բանվորների լրացուցիչ մատակարարում։

Քաղաքամերձ տնտեսությունների լայնացման համար Պրոֆմիությունների Համկենտիորնը պլուֆմիությունական բյուջեից բաց ե թողել մինչև 100 միլիոն սուբլի։ Քաղաքամերձ տնտեսությունների ամրապնդման համար Պրոֆմիությունների Համկենտիորնի նախագահությունը մորիլիզացիայի ե լենթարկել 350-ից ավելի աշխատողներ։

Քաղաքամերձ տնտեսությունների միծամասնության աշխատանքի խոշորագույն թերությունը հանդիսանում է ցածր բերքատվությունը։ Մի հեկտարից փոխանակ նշած 13 տոնն բանջարեղեն ստանալու, մենք միջին հաշվով ստացել ենք միայն 6 տոնն։ Քաղաքամերձ տնտեսությունների աշխատանքում դիռես հաճախակի լերսույթներ են՝ ցածր ապրանքայնությունը կոռպերացիայի կաթնային ֆերմաններում, աշխատանքի չափազանց վատ կազմակերպությունը կոռպանտեսություններում։

Այնուամենայնիվ, չնայած այս թերություններին, հաջողություններն այս ասպարեզում հսկայական են։ Պրոֆմիությունները պետք ե այնպես անեն, վոր քաղաքամերձ տնտեսությունների ցանցը ֆարբիկ-գործարանալին կենտրոնների, շենքերի, ույունների և ձեռնարկների շուրջը ծավալվի այնպես, վոր այդ ույունների բանվորները մոտ ժամանակում հիմնականում ապահովված լինին իրանց արտադրանքով (բանջարեղեններով ու կաթնամթերքով)։ Քաղաքամերձ տնտեսությունները պետք ե ամրացնել ձեռնարկներին։ Դրանով կբարձրանա բանվորների շահագրգուժությունը դեպի նրանց և կբարձրանա վոչ միայն բանվորների վերահսկությունը, այլ և նրանց մասնակցությունը քաղաքամերձ տնտեսությունների կազմակերպման մեջ։


## ՈՒԵԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՅԱԼԻ ,,ՄԱՆՐՈՒՄԲՆԵՐԻՆ“

Վերջին տարիներում հսկայական չափով աճել ե բնակարանակոմունալ շինարարությունը 1927—28 թվին բնակարա-

նային ու կոմունալ շինարարությանը, դպրոցներին, հիվանդանոցներին, մասուրներին, բաղնիքներին և այլն հատկացրվել ե 3.371 միլիոն սուբլի, իսկ 1932 թվին այդ գումարը հասնում է 9.733 միլիոն սուբլու։ Բնակարանային շինարարության մեջ 1930 թվին ներդրված է յեղել 511 միլիոն սուբլի, 1931 թ.՝ 720 միլ. սուբլի իսկ 1932 թվին ներդրվելու հ 1.900 միլիոն սուբլի։ 1928 թվից մինչև 1931 թվից նոր բնակարաններով ապահովվել են 3 միլիոն բանվոր։ Միայն ընթացիկ տարում մենք կկարողանանք բնակարանով ապահովվել 3 միլիոն մարդ, այսինքն այնքան, վորքան առաջ հաջողվել ե անել 3 տարում։

Դոնբասի բնակարանային ֆոնդը վերջին տարիներում ավելացել է 98%։ Բոլորը գիտեն, թե ինչ եր նշանակում բնակարանը նախապատերազմական Դոնեցկի ալուզանում, վորտեղ կալին բացառապիս կազմաներ 3—4 շաբք թախտերով։ Մեր հաջողությունների մեջ համոզվելու համար բավական է այժմ գնալ արդյունաբերական ռայուններից վորեւե մեկը—Դոնբաս, Ուրալ կամ այլ ռայուններ,—այնտեղ կարելի ե տեսնել լավ սարքավորած տների ամբողջ նոր քաղաքներ ու շենքեր։

Բայց և այնպես պետք ե մատնանշենք, վոր ռայունների միծ մասում պրոֆմիությունների մասնակցությունը բնակարանային շինարարության մեջ չափազանց անբավարար է։ Կուսակցությունը ամբողջ հասակով խնդիր է գրել—ծավալելու բնակարանային կոմունալ շինարարությունը։ Բայց յես պետք ե ուղղակի հայտարարեմ, վոր պրոֆմիությունները դեռևս չափազանց անբավարար են կատարում վեկս.Պե-ի (թ) կենտրոնի (1931 թվի) հունիսյան պլենարմի պատմական վլորշումը։ Մի շաբք ռայուններում բնակարանային շինարարության պլանները չեն կատարվում և պրոֆմիությունները պարզապես անուշադիր են վերաբերվում դեպի այդ։ Այսպես, որինակ, չափարարված բնակարանների տոկոսը 1931 թ. հավասար է 52,4։ Մի քանի դեպքերում շինարարությունն ամենախայտառակ կերպով ե կատարվում։ Որինակ, Դնեպրոստրոյում մի շաբք տներ այնպես են շինուագավակին մասը հատկացրված է խոհանոցների, իսկ հյուսիսալինը—բնակվելու համար։ Մի այլ տեղերում բնակվելու տներ են շինում 40—50 սենյակից մի արտաքնոցով։



Պրոֆմիությունները տնտեսորդանների հետ միասին պետք ե պատասխանատու լինեն բանվորների բնակարանային պայմանները բարելավելու համար:

Պրոֆմիությունների կողմից մեծ աշխատանք ե տարված նաև բանվորութիւններին մեծ չափով արդյունաբերության մեջ ներգրավելն ապահովող պայմաններ ստեղծելու բնագավառում: Դուք գիտեք, վոր 1931 թվին արդյունաբերության մեջ են ներգրավել մոտավորապես 2 միլիոն կին:

Դա նույնպես պահանջել ե հասարակական սնունդը ծավալելու, լվացքատներ և այլ սոցիալ-կենցաղային հիմնարկներ կառուցելու հետ միասին ծավալել մսուրնելը:

1932 թ. մսուրներում յեղած տեղերի ընդհանուր թիվը պետք ե բավարարի նրանց ամբողջ պահանջի 90—95 տոկոսը:

Պրոֆմիությունները պարտավոր են ուժեղացնել իւնց հոգատարությունը բանվորի ու նրա ընտանիքի կարիքներն ու պահանջները բավարարելու նկատմամբ և վճռական պայքար մղեն պրոֆմիությունների կողմից գեպի բանվորական կենցաղի «մանրունքներն» ունեցած արհամարհական վերաբերմունքի արտահայտումների դեմ: Նա ով չի հասկանում, պրոֆմիությունների տնտեսական շինարարությանը՝ մասնակցելը՝ բանվորների նյութական-կենցաղային պահանջների սպասարկման բնագավառում յեղած աշխատանքի ծավալման հետ շաղկապելու անհրաժեշտությունը, — նա անխուսափելի կերպով կոպտագույն ոպպորտունիստական սխալներ և գործելու:

Բանվորների նյութական-կենցաղային սպասարկման ամենորյա աշխատանքի մեջ պրոֆմիությունները պետք ե լինեն ընկ. Ստալինի այն ցուցմունքից, վոր «այժմյան բանվորը, մեր խորհրդային բանվորն ուզում ե ապրել ծածկելով իր բոլոր նյութական ու կուլտուրական պահանջները և պարենային մատակարարման իմաստով, և բնակարանների իմաստով և կուլտուրական ու ամեն տեսակի այլ պահանջներն ապահովելու իմաստով: Նա այդ բանի իրավունքն ունի և մենք պարտավոր են նրա համար ապահովելու այդ պայմանները»:

Մեր կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի այս հստակ ու պարզ դիրեկտիվը պետք ե հիմք ծառայի պրոֆմիությունների ամենորյա աշխատանքում:

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՃՈՒՄԸ

Ընկերներ, սոցիալիստական շինարարության համար մղվող պայքարն առաջին տեղն ե քաշել կուլտուրական հեղափոխության խնդիրները և պահանջել ե, վոր պրոֆմիությունները վճռականորեն վերակառուցեն և ուժեղացնեն կուլտուր-քաղաքական աշխատանքը: «Պրոֆմիություններն, — ասել ե Լինինը, — դաստիարակչական կազմակերպություն են, ներգրավելու, սովորեցնելու կազմակերպություն, դա կառավարելու դպրոց ե, տնտեսավարելու դպրոց, կոմմունիզմի դպրոց»:

Աջ ոպպորտունիստերը կուլտուրական աշխատանքը դարձնում եին «բանվորական մասսաններին միայն տարրական կուլտուրական սովորություններ հազորգել և տալ նրանց կուլտուրական զգարձություններ» (Տոմսկի): Աջ ոպպորտունիստերը ժխտում եին կուլտուր-քաղաքական աշխատանքի կազմակերպիչ ու դաստիարակիչ նշանակությունն աշխատանքի սոցիալիստական կազմակերպության մեջ:

Այժմ մեր անելիքն ե ավելի ևս ծավալել կուլտուր-քաղաքական աշխատանքը և հաղթահարել ոպպորտունիստական աղաղաղումները կուլտաշխատանքում:

Վորոնք են մեր նվաճումները բանվոր գասակարգի կուլտուրական ամման բնագավառում: Յեթե 1920 թվին սովորել են 1.100 հազար անգրագետ ու կիսագրագետ, 1928 թվին՝ 2 միլիոն մարդ, ապա 1931 թվին մօնք արդեն սովորեցնում ենք 21 միլ. մարդ: ԽՍՀՄ-ում գրագիտության մակարդակը բարձրացել ե 50%-ից 1926 թվին՝ մինչեւ 80 տոկոս 1931 թվին: Անգրագիտության տոկոսը Խորհրդային Սրբության բանվորների մեջ աննդիատիչնում ե, հստանելով 1931 թվին (առանց գյուղատնտեսմիությունների)՝ 4,6%, իսկ մետաղագործների մեջ՝ 2,4%:

1931—32 թվին Խորհրդային Միությունում իրագործված ե ընդհանուր տարրական ուսումը: Դա բանվոր գասակարգի խոշորագույն հաղթանակն ե, վորով մենք իրավունք ուսումը պարծենալու: Մեր յերկրում ընդհանուր տարրական ուսումը կարելի եր մացնել միայն բանվոր գասակարգի ամենալայն մասների ակտիվ մասնակցությամբ:

Մենք պետք ե մատնանշենք նուև բարձրագույն դպրոցների և բարձրագույն տեխնիկական կրթական հիմնարկությունների ցանցի արագ աճումը: 1914—15 թվին չեղել են 91 բարձրագույն դպրոցներ՝ ու բարձրագույն տեխնիկական կրթական հիմնարկություններ, իսկ 1930—31 թվին—536, այսինքն ավելացում համարյա 6 անգամ: Միայն 1931 թվի ընթացքում տեխնիկումներում սովորող բանվորների թիվը աճում է 344%, և բարձրագույն դպրոցներում սովորող բանվորների թիվը—226%: Միայն բարձրագույն դպրոցներում սովորողների թիվը 1931 թվին 1929 թվի համեմատությամբ ավելացել է համարյա 2 անգամ (160,5 հազար մարդուց հասել է 272 հազարի):

Բարձրագույն դպրոցներում և բարձրագույն տեխնիկական կրթական հիմնարկություններում սովորող բանվորների տեսակարար՝ կշիռը, վոր 1928 թվին չեղել է 38%, 1931 թվին բարձրացել է 63,7%-ի:

1932 թվին Խորհրդային Միուրյանում կրրուրյան բոլոր ձեվերավ ընդգրկվելու ե 80 միլիոն մարդ, այսինքն յուրաքանչյուր յերկու բնակչից մեկը սովորող ե լինելու:

Պրոֆմիությունները բացառիկ դեր են խաղացել խորհրդային այս հսկայական հաջողությունների իրականացման մեջ կուտուրական հեղափոխության բնագավառում: Պրոֆմիությունները միլիոնավոր կամագորներ են ներդրավել անդրագիտության վերացման ակտիվ աշխատանքի մեջ: Այժմ մենք պրոֆմիությունների անդամների շարքերում ունենք 95,4 տոկոս զրագետներ:

Սնգրագիտության լիկվիդացիայի գործում մենք արդեն այնպիսի հաջողություններ ունենք, վոր մեր առաջ խնդիր պետք է դնենք մինչեւ հոկտեմբերյան հեղափոխության VХ-րդ տարեդարձը բոլոր բանվորների շարքերում ամբողջապես լիկվիդացիայի լենքարկել անգրագիտուրյունը: Պրոֆմիությունների IX համագումարը այդպիսի մարտական դիրեկտիվ պետք ե տա (ծափահարություններ):

Կուլտուրաշխատանքի վերակազմության մեջ մենք առանձին ուշադրություն ենք դարձել ակումբների և կարմիր անկյունների աշխատանքի վրա: Պրոֆմիությունների VII համագումարից մինչև հիմա ակումբային շինարարության համար ծախսված

և 80 միլիոն ոռութիւնի կառուցված է 500 նոր ակումբ: 1931 թվին կուլտուրայի ու հանգստի պարկեր են հիմնված Գորլովկայում (Հանրապետություն Ն 1) և Ռիկովյի ուայոնում (Դոնբաս): «Կարմիր Պետկով» ֆաբրիկայի կեց (իվանովովի շրջան, պարկի կազմակերպումն սկսված է):

Ակումբների կուլտուրագաղաքական աշխատանքը հիմնականում վերակառացված է բներսը դեպի արտադրությունը: Ակումբները ձեռնարկներում մասսայական աշխատանքի կազմակերպող կենտրոններ են դարձել:

Առանձին ուշադրության արժանի ե Վիբորգյան կուլտուրայի տունը (Լենինգրադի), վորի աշխատանքի փորձը, ձերնում մեթոդները պետք ե տեղափոխել ուրիշ ակումբներ և կուլտուրայի պալատներ: Մենք մանրամասն կերպով ծանոթացնել ենք այդ կուլտուրայի պալատի աշխատանքի հետ և յես, ընկերներ, առանց չափազանցացնելու պետք ե ասեմ, վոր հիրավի չի չեղել կուլտուրագաղաքական աշխատանքի վոչ մի խոշորագույն հարց, վորի մոտից անցներ այդ կուլտուրայի տունը: Նրա աշխատանքում կամ կուլտուրայի մեջքը կայանում և բանվորական մասսաների լայն կուլտուրագաղաքական սպասարկման մեջ և նրանց կազմակերպման մեջ՝ պայցքարելու արդիքինապանը կատարելու համար: Միայն մի տապայցքարելու առդիքինապանը կուլտուրայի տունը սպասարկել է 2.090.635 մարդ: Կուլտուրայի տան միջոցով Վեկսել-ի (բ) անդամ են գարձել 1.300 մարդ, հավաքված է 1455 բանվորական առաջարկություններում կուլտուրայի տունը սպասարկում է 300-ից ավելի ոտարէերկրյա բանվորների: Կուլտուրայի տունն իր աշխատանքը տանում ե լիազորների խորհրդի և ձեռնարկներում աշխատող ֆունկցիոնների կատարելի միջոցով: Նրանք ազդանշան են տալիս արտադրական անհարթությունների մատուցության մեջ յեղած արտադրական անհարթությունների մասին և կուլտուրայի տան միջոցով կարողանում են վերացնել այդպիսի:

Լենինգրադի պրոֆմիությունների խորհուրդը պետք է այնպիս անի, վոր կուլտուրայի տունը ամբողջ ուայոնի ձեռնարկների համար արագորեն դառնա կազմակերպչական ու մեթոդական կենարուն, այն ժամանակ նրա աշխատանքի հաջողությունն անշափ մեծ կլինի:

Ինչու կուլտուրայի տունը հասել է այդպիսի մեծ հաջողությունների:

Հաճախ ասում են, վոր այդ հաջողությունները կարելի են բացատրել կուլտուրայի տան աշխատանքների համար ահագին միջոցներով ծախսելով: Դա ճիշտ չեն: Վիրորգի կուլտուրայի տանը բաց են թողնվում տարեկան միայն 100 հազար ռուբլի, իսկ տան շրջանառությունը համում են մի քանի միլիոն ռուբլու: Հիմնականը կայանում են նրանում, վոր կարողանում են կազմակերպել մասսաների աճող ակտիվիությունը, ստեղծել կամավորական ակտիվ, ոգտագործել կուլտ-քաղաշխատանքի բոլոր ձեւերն ու մեթոդները սոցիալիստորեն-գիտակից բանվորի դաստիարակման գործում:

Կուլտուր-մասսայական աշխատանքի մեջ պրոֆմիությունների ուսեցած ահագին հաջողությունների հետ միասին կա նաև թերություններ ակումբների աշխատանքի մեջ: Կարելի եր շատ որինակներ բերել ակումբների խայտառակ դրության մասին:

Պրոֆմիությունները պետք են վճռական պայքար մղեն կուլտուրական աշխատանքի թերությունների դեմ: Բարձրացնել մասսաների կուլտուրական մակարդակը, կոմմունիստորեն դաստիարակել մասսաներին, զինել նրանց մարքսիզմի-լենինիզմի գիտությամբ և արտադրության տեխնիկայով, դրա մեջ են կայանում պրոֆմիությունների անելիքը կուլտուրական աշխատանքի ասպարեզում:

Ընկերներ, յես ասացի, վոր մենք կուլտուրական ճակատում վճռական բեկում ենք ձեւք բերել: Սակայն պետք են ընդգծել, վոր այդ բեկումը միայն սկիզբն են հանդիսանում պրոֆմիությունների այն հակայական աշխատանքի, վորով նա ներկրավում է լայն մասսաները կուլտուրական հեղափոխությունն ամենաարագ կերպով իրագործելու գործնական պայքարի մեջ: Կուլտուր-քաղաքական աշխատանքի բնագավառն ամենալուրջն են ամենից դժվարը: Այստեղ պահանջվում են բանվոր դաստիարակի և արտադրատեխնիկական ինտելիգենցիայի ամենակուլտուրական ու ամենագրագետ ուժերը:

## ՊՐՈՓՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՐՈՒՅԹՈՒՄԸ

Պրոֆմիությունների առաջ գրած նոր խնդիրների կատարումը պահանջել եր արմատական վերակառուցել պրոֆմիությունների կադրակերպչական ձեւերը և փոխել նրանց աշխատանքի:

Այս բնագավառում կարևորագույն միջոցառումներից մեկն են յեղել պրոֆմիությունների ապահովորացումը, վորն անց են կացրել Պրոֆմիությունների Համկենտիորհը կուսակցության կենտրոնի և ընկ. Ստալինի նախաձեռնությամբ: 23 միության փոխարեն այժմ ունենք 44 միությունների ապահովությունների գրական արգունքներ և տվելու Պրոֆմիություններն ավելի են մոտեցել արգյունաբերության առանձին ճյուղերի ուսումնասիրությանը և դրա հիման վրա—լայն բանվորական մասների անմիջական սպասարկմանը: Մինչև ապահովորացումը մի կենտրոնը, որինակ, մետաղագործների կենտրոնը կապված են յեղել 30 տնտեսուկան միավորությունների հետ: Այսպիսի գրության հատեվանքն այն են յեղել վոր միությունների կենտրոնի ուշադրությունը կենտրոնանում եր այդ միավորություններից միայն մի քանիսի վրա՝ ի ըստ մյուսների, վորոնցից յուրաքանչյուրն ընդգրկում են ահագին թվով բանվորներ և խոշորագույն դեր են ընդգրկում մասսանքի միության մեջ: Իսկ մաքսիմում հարցազրկում ժողովրդական տնտեսության մեջ է իսկ մաքսիմում հարցեր ընդգրկելու ձգումը ուղղնամ եր կենտրոնների ապարատը հասցնում եր այդ հարցերի միանգամայն մակյերեսամայն քընությանը:

Պրոֆմիությունների աշխատանքի վերակառուցումը պահանջում եր արմատապես ամրապնդել ստորին պրոֆորդաները — Փարզործական կոմիտեն: Վլլ-և Խ համագումարի մեջ ընկած ժամանակաշրջանում տարված վերընտրական կամպանիան խոշորագույն ետապ են հանդիսացել պրոֆմիությունների աշխատանքի վերակառուցում ավարտելու գործում: 1931 թ. Փարզործական կոմիտեի վերընտրական կամպանիան իսկապես դարձել եր պրոֆաշխատանքի հիմնական ստուգատես: Նա դարձել եր այն բանի պահանջմանը թե ինչպես են պայքարում պրոֆմիությունները ընկ. Ստալինի օպականական համար:

Միլիոնավոր մարդեկ անմիջապես մասնակցել են Փարզործական կոմիտեի աշխատանքին, նրանց գործունեյության ստուգամանը: Այդ միլիոնները ստուգել են Փարզործական աշխատանքի բարությունները և մտցրել են կոնկրետ առաջարկություններ: Ասացել ընկերներ, կա արդյոք վորեւ մի ուժորմիստական պրոֆմիությունն նման պրոֆմիությունների դեմոկրատիա: Իհարկե,

այնտեղ գուշ նմանորինակ վոչինչ չեք դոնիւ Համարելով իրենց գեմոկրատիայի «մարտիկներ», բանվոր դասակարգի այդ դափաճանները զաղրելի զրպարտություն են տարածում խորհրդային պլոփմիությունների դեմ: Իմ բերած ֆաստերը պերճախոս կերպով վկայում են իրենց մասին, մերկացնելով այն զրպարտությունը, վոր տարածում են սոցիալ-ֆաշիզմի ղեկավարները խորհրդային պլոփմիությունների մասին (ծափահարություններ):

Ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների թվի աճան հետ միասին աճել ե նաև պլոփմիությունների անդամների թիվը: Մինչեւ 1928 թ. հոկտեմբերի 1-ը պրոֆմիությունների անդամականությանը կազմել ե 11 միլիոն մարդ: 1930 թվին նա անել ու հասել ե 13 միլիոն մարդու, իսկ պրոֆմիությունների IX համազումաքին մենք հաշվում ենք մեր շարեւրում 16,5 միլիոն պրոֆմիությունների անդամ:

Ըսկերներ, թույլ տվեք յեղրափակման մեջ կանգ առնել, մի քանի հարցերի վրա, վորոնք բյուում են իմ ամբողջ զեկուցումը: Մեր առաջ հսկայական խնդիր ե զրված՝ հաջողությամբ ավարտել 1932 թիվը—առաջին բոլշևիկյան հնգամյակի յեղրափակիչ տարին—և դրանով իսկ ստեղծել բոլոր անհրաժեշտ նախադրյալները ժողովրդական տնտեսության հետեւալ հնգամյա պլանը կատարելու համար: Պրոֆմիությունները պետք ե ապահովեն ամենալայն բանվորական մասսաների մասնակցությունը յերկրորդ բոլշևիկյան հնգամյակը կազմելու մեջ և նրա կատարման համար մորթիկացիակի պետք ե յենթարկելն ամբողջ բանվոր դասակարգը և աշխատավորների ամենալայն մասսաները:

XVII կուսկոնքերանուը ամբողջ ույժով ընդգծել ե, վոր «հետագայում ել դեռևս անխուսափելի ե դասակարգային պայքարի սրումն առանձին մոմենտներում և մանավանդ առանձին ույններում և սոցիալիստական կառուցման առանձին ճյուղերում, վոր միաժամանակ նա ընդգծում ե բուրժուական ազգեցությունների պահպանման անխուսափելիությունը, իսկ մի քանի դեպքերում նույն իսկ ուժեղացումն աշխատավորների առանձին խավերի և գրուպպաների վրա, վոր լերկար ժամանակ գեռակ անխուսափելի պրոլետարիատի համար խորթ դասակարգային ազգեցությունների ներխուժումը բանվորների շրջանը և նույն իսկ կուսկոնքության մեջ: Այդ պատճառով կուսակցու-

թյան առաջ խնդիր ե գրված՝ ամբազնդել սրոլետարիատի դիկտատուրան և հետագայում ավելի և ծավալել պայքարն ոպպորտունիզմի և աջ թեքման դեմ, վորպես վլխավոր վտանգի գեմ տվյալ հետապում»:

Պրոֆմիությունների անելիքն ե հետագայում ավելի և ծավալել պայքարը պրոֆշարժման մեջ յեղած ոպպորտունիզմի դեմ և վճռականապես հաղթահարել այն տրեգ-յուններունիտական, սինդիկալիստական և այլ պրոլետարիատին թշնամի դասակարգային ազգեցությունները, վորոնք հետագայում և անխուսափելիքը ներս են մտնելու աշխատավորության առանձին խավերը ու գրուպպաների մեջ և պրոֆշարժման շարքերը:

Հեղափոխական զգաստություն դասակարգային թշնամութեմ և պրոլետարիատի դիկտատուրայի ամբազնդում, անհաշտ պայքար ոպպորտունիզմի բոլոր տեսակների գեմ—աջ ոպպորտունիզմի դեմ, վորպես վլխավոր վտանգի գեմ տվյալ հետապում, սինդիկալիստական պայքարականության բոլոր աղավաղութերի դեմ,—այս են մեր հաղթահարելի վճռական պայմանները յերկրորդ հնգամյակում:

«Հաղթելու, սոցիալիզմ ստեղծելու և այն ամբազնդելու» ամենակարենը պայմաններից մեկը լենինը համարում եր այն, թե պետք ե ստեղծել «նոր հասարակական կազի, նոր աշխատանքային դիսցիլինայի, աշխատանքի նոր կազմակերպություն, վորը միացնում և գիտության և կապիտալիստական տեխնիկայի վերջին խոսքը խոշոր սոցիալիստական արտադրություն ստեղծող գիտակից աշխատաղների մասսայական միության հետ»: Ըսկ լենինի այս խոսքերը գերաբերում են վոչ միայն ֆարբեկներին ու գործարաններին, այլ և սոցիալիստական յերկրագործությանը: Ըսկերներ, պրոֆմիությունները կոմմունիզմի այն դպրոցն են, վորտեղ կոփիվում ե նոր բանվորի, սոցիալիստական հասարակության ակտիվ կառուցողի տիպը, այն բանվորի, վորուազան աշխարհի կեղտից և կարող են ապահովել սոցիալիստական կուլտուրայի և սոցիալիզմի արտադրողական ուժերը անզուսպ զարգացումը:

«Ազգաբնակության ապահովումը հիմնական սպառողական ապրանքներով և գրանց թվում սննդի առարկաներով յերկրորդ հնգամյակի վերջին պետք ե ավելանա վոչ պակաս քան 2—5

անգամ—առաջին հնգամյակի վերջի համեմատությամբ»: Յերկրորդ հնգամյակի դրած այս խնդիրը պրոֆմիություններից ահա գին աշխատանք են պահանջում,—անընդհատ բարձրացնելու աշխատավորների նյութական մակարդակը և վճռականապես արմատախիլ անելու ողպորտունիստական արհամարհանքը դեպի բանվորական կենցաղի «մանըունքները», վորը դեռևս ապրում ե շատ պրոֆմիությունական կազմակերպությունների մեջ: Մենք ավելի ու ավելի հաստատական պայքար ենք մղելու նրանց դեմ, ովքեր մոռանում են, վոր բանվորի ու նրա ընտանիքի նյութական սպասարկման գործը, յերկրորդ հնգամյակի անելիքներն ամբողջապես իրազործելու համար մղվող անձնազոհ պայքարի գործը պրոֆեսիոնալ շարժման ամենակարևոր գործն է:

Մեր բանվորն ավելի լավ ե ապրում ե ել ավելի լավ ապրել և ավելի լավ ե ապրելու, —այսպես պետք ե լինի խորհրդային պրոֆշարժման լողունքը, և մենք չենք կասկածում, քնկերներ, վոր խորհրդային միությունները կուսակցության զեկավարությամբ կհասնեն դրան (բուռն ծափանարություններ):

Ընկերներ. մեր հաղթանակը յերկրի ներսում՝ հածտատ ե ու անսասան, սակայն մենք վոչ մի բոպե չպետք ե մոռանանք, վոր «ոլ՝ ում» հարցը, վորը հանգած և վճռված ե Խորհրդային Միությունում սոցիալիզմի ոգտին, ավելի ևս մեծ սրությամբ տեղափոխվում ե միջազգային ասպարեզը: Խորհրդային Միությունը հենց իր գոյության փաստով ահազին հեղափոխական ազգեցություն ե գործում կապիտալիստական յերկրների և գաղութների աշխատավոր մասսաների վրա: Կամլած չկա, համաշխարհային իմպերիալիզմի ու նրա հավատարիմ ծառաները—բոլոր յերկրների սոցիալ-ֆաշիստները հուսահատական փորձեր են անելու զինված ձեռքով խախտելու սոցիալիզմի հաղթական կառուցումը մեր յերկրում: Մեզ հաջողվել ե,—ասել և ընկ. Ստալինը, —պահպանել հաշտությունը և թուլ չտալ վոր թշնամիները մեղ կոնֆլիկտների մեջ ձգեն, չնայած պատերազմի հրձիգների մի շարք պրովկացիոն ակտերին և ավանայուրիստական հանդգնություններին: Հաշտության այդ քաղաքականությունը մենք այսուհետև ել շարունակելու ենք տանել բոլով ուժերով, բոլոր միջացներով: Վոչ մի թիզ ուրիշի հողից չենք ուղում, բայց և մեր հողից վոչ ոքին վոչ մի վերշոկ չենք տա»:

Ընկ. Ստալինի այս խոսքերն ամենից ավելի լավ են արտահայտում մեր յերկրի ամբողջ բանվոր գասակարգի զգացմունքներն ու հաստատուն մտադրությունները, և Խորհրդային Միության պրոֆմիությունները, կատարելով սոցիալիստական շինարարության անելիքները պատրաստ են ամեն մի մոմենտ, մեր բոլշևիկան կուսակցության և խորհրդային իշխանության կոչին զենքը ձեռին պաշտպանելու սոցիալիզմի շահերը ԽՍՀՄ-ում—ամպենքը ձեռին պաշտպանելու սոցիալիզմի շահերը (բուռն յերկարաժել ծափանարություններ):

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊՐՈՓՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ԵՏԱՊՈՒՄ

ԸՆԿ. Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉԻ ՃԱՌԸ

Պրոֆմիությունների համամիութենական 9-րդ համագումարում 1932 թվի ապրիլի 28-ին

## 1. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՄՌՋՄԻՈՒԹԵ- ՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնկերներ, թույլ տվեք ամենից առաջ կանգ առնել արտադրական միությունների և միջմիութենական կազմակերպությունների փոխարարերությունների ու աշխատանքի վրա:

1931 թվի հունվարի 15-ին կուսակցության կենտկոմը և Պրոֆմիությունների Համամիութենական կենտրոնը մի վորոշում են ընդունել միություններն ապահովողացնելու և 44 միություն ստեղծելու մասին։ Այդպիսով պրոֆմիությունների ու նրանց կենտրոնների քանակությունն ավելացել է յերկու անգամ։ Ապահովացման վերաբերմամբ կայացրած վորոշումը միայն կազմակերպչական նշանակություն չունի։ Դա կապված է պրոֆմիությունների խնդիրների մասին կուսակցության կայացրած հիմնական քաղաքական վորոշումների հետ։ Այդ վորոշումներն իրանց ամենացայտուն արտահայտությունն են գտել «Պրոֆմիություններ, յերեսներդ գեպի արտադրություն» հակիրճ, բայց արտահայտիչ լոգունգում։

Այդ լոգունգը պրոֆմիությունների համար ե, և դեռ յերկար ժամանակ վերակառուցողական ժամանակաշրջանի կենտրոնական լողունգը հանդիսանա:

«Յերեսդ գեպի արտադրություն» լոգունգը աշ ուկլոնիստների դիմադրությանն ե հանդիպել, զորովհետեւ նըանք յելնում

եին պրոլետարիատի շահերը, նրա կենցաղի նյութական բարելավման շահերը՝ սոցիալսուստական արդյունաբերության շահերին հակադրելու մենցկիկան-արոցկիստական դրույթից։

Միությունների 8-րդ համագումարից մինչև ներկա 9-րդ համագումարը պրոֆմիությունները կուսակցության ղեկավարությամբ վոչ միայն ջախջախել են արեգ-յունիսիստների գաղափարներն ու պրակտական, վոչ միայն ըմբռնել են պրոֆմիությունների վերակառուցման մասին կուսակցության տված լողունգի նշանակությունը, այլ և գործով յերեսները գեպի արտադրությունը են դարձել։ Սոցիալսուստական մրցությունն ու հարվածայնությունն անպայման հիմնական ողակ են դարձել պրոֆմիությունների աշխատանքն աշխատացնելու և բարեկավելու գործում։ Հենց այդ են այն վճռական, քաղաքական արդյունքները, զորի գումարը դուք տվիք այստեղ համագումարում։

Սակայն գործնականում, հիմնական խնդիրների իրացման ամենորյա աշխատանքում մենք դեռ ահազին թերություններ ունենք, զոր անհրաժեշտ ե հենց այսոր յերեսն հանել և ուղղել մասնակրապես այն թերությունները, զոր կան կազմակերպչական հարցում։

Կուսակցության կենտկոմի և Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի վորոշումը 22 նոր արտադրական միություններ ստեղծելու մասին՝ կազմակերպչական հարցի վերաբերմամբ աջ պրոֆաշխատողների դեմ մղած պայքարի ավարտումն ե։ Այդ վորոշմամբ՝ կուսակցության կենտրոնական կոմիտեն արտադրական միությունների դերը բարձրացնելու խնդիրն ե դրեւ, ու հենց դրանով ել «յերեսով գեպի արտադրություն» լոցունգն ավելի հաջող կենսագործելու առորյա գործնական աշխատանքում։

Թույլ տվեք մի քանի կետեր կարդալ կուսակցության կենտրոն իրանց ամենացայտուն արտահայտությունն են գտել Պրոֆ. կոմի վորոշումից (հենց այդ վորոշումը հիմք ե կազմել Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի հինգերորդ պլենումի վորոշման)։

«Յելնելով այն բանից, վոր արդյունաբերության յեվ տնտեսական միացուրյունների բազմապիսի նյութերի բանվորների ահազին մասսաները միացնող պրոֆմիությունների ներկայումս գոյուրյուն ունեցող կազմակերպությունը դժվարացնում է պրոֆմիությունների կոնկրետ մասնակցությունը՝ արդյունաբերության դեկավելու, կանվարական մասսաների անող ակտիվությունը կոն

կրես հարցերի շուրջը կազմակերպելու, բանվորների առանձին խրմ-  
բերի արտադրական յեվ կենցաղային առանձնահատկությունների  
ավելի մանրագննին հաշվեառման, դրանց լավագույն կերպով սպա-  
սարկելու յեվ բյալբուրատիզմի դեմ պայքար մեջիու գործում, —ան-  
հրաժես համարել պրոնմիությունների կառուցման արտադրական  
սկզբունքի հիմունով՝ ապահուուացնել մի շարք պրոֆմիություններ՝  
սեղծելով մի շարք նոր միություններ»

Կուսակցության կենտկոմն այսակ յելել ե պրոֆմիություն  
ների հիմնական, վճռական խնդիրներից: Նույն վորոշման մեջ մի  
շարք կետեր կան արտադրական սեկցիաների ու առաջատար  
պրոֆեսիաների հետ տանելիք աշխատանքի մասին, սակայն այդ  
կետերը, դժբախտաբար, դեռ ևս պատշաճ կերպով չեն արտացո-  
ւել շատ պրոֆկազմակերպությունների պրակտիկայում:

«Արտադրական հարցերի լուծման ավելի շատ բանվորներ մաս  
նակից անելու յեվ նրանց սպասարկումը լավագույն կերպով ապա-  
հովելու նպատակով՝ միություններում արտադրական սեկցիաներ  
կազմակերպել՝ բայ արդյունաբերության կարելուագույն նյուղերի...  
Սեկցիաներ սեղծելու հետ միասին՝ լայնուեն կիրառել հատուկ  
ժողովներ անցկացնելով, բայ արհեստների (ծովողներ, սեսարներ,  
բրակովչիկներ, մեենափարներ, տրակուրիսներ, յենրափարպեսներ,  
ոակլիսներ յեվ այլն) արտադրական խորհրդակցություններ հրավի-  
րել, ջոկելով ցեխերում՝ ցեխի լիազորի հետ միասին՝ նայեվ լիազոր  
անազատար արհեստների վերաբերմակը»:

Դուք տեսնում եք այդ վորոշման մեջ վորոշակի նպատա-  
կածքում, վոր կայանում ե նրանում, վորպեսզի մենք ունիվեր-  
սալիզմից, ընդհանուր դատողություններից և «ընդհանրապես ու  
ամբողջովին» զեկափարությունից՝ կռնկրեա կերպով մոտենանք  
արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղին և նույն իսկ առան  
ձին-առանձին արհեստներին:

Կարող ենք արդյոք այսոր մենք ձեզ հետ միասին ասել  
թե այդ առաջադրությունները կյանքի մեջ են մտցրված, ըմբո-  
նված են պատշաճ չափով: Մենք չենք սխալի, յեթե ասենք,  
վոր բոլորը չեն այդ բանն ըմբոնել պատշաճ չափով:

Ասում են, որինակ, վոր նույնիսկ Պրոֆ. Համ. կենտր. Խոր  
հըրդում լինում են այնպիսի գեպքեր, յերբ Պրոֆ. Համ. կենտրո-  
նական Խորհրդի ապարատում աշխատողներից մեկը կարող ե

փոխել միության կենտկոմի այս կամ այն վորոշումը: Ճիշտ ե  
այդ, թե վոչ (տեղից՝ «պատահում ե»): Դա ճիշտ չէ: Վորոշու-  
մը փոխել կարող ե միմիայն Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի պրե-  
զիդիումը կամ քարառարությունը: Միության կենտկոմը պետք  
ե ուղղակի անմիջականորեն կապված լինի Պրոֆ. Համ. կենտր.  
Խորհրդի հետ, իսկ յերկրային բաժինները՝ յերկրային պրոֆ-  
խորհությունների հետ: Ել ավելի հաճախ են արտադրական նախա-  
ձեռնող, ամրապինդ միությունների զրուցթյունների նման խախ-  
տումներ լինում շրջաններում ու ույոններում:

Բայց չե վոր արտադրական միությունների և միջմիութե-  
նական կազմակերպությունների (քաղաքային և շրջանային)՝  
փոխհարաբերությունների հարցը նոր չէ: Մի շարք տարիների  
ընթացքում խորհրդային պրոֆշարժման մեջ լենինյան գրութ-  
ների գեմ կազմակերպչական հարցերում պայքարել են յերկու  
ոպորտունիստական տեսդինցներ—ամբողջ պրոֆաշխատանքի  
բյուրոկրատական կենտրոնացում միջմիութենական կազմակեր-  
պություններում (այսպես կոչված «միասնական միություն») և  
առանձին միությունների ցեխային, կաստայական տեսդինցներ:

Իսկ մական կոմունիզմի ժամանակ արտադրությունը քայ-  
քայված դրության մեջ եր գտնվում, արդյունաբերական կաղրա-  
յին պրոլետարների մեծ մասը գործարաններից Փրոնտ եր գնա-  
ցել: Պրոֆշարժումը հասել եր այնտեղին, վոր պրոֆմիություն-  
ների յերրորդ համագումարի վորոշումներում (1920 թվի ապրիլ)  
ուղղակի մատնանշված ե, վոր «միութենական շինարարության  
ավարտված սխեման կհասցնի արտադրական ինքնուրույն միա-  
ցությունների վոչնչացմանն ու նըանց պրոֆշարժման համառու-  
սական կենտրոնի սեկցիայի վերածելուն»:

Ել ավելի վորոշակի ե արտահայտվել պրոֆմիությունների  
IV համագումարը (1921 թ. մայիս), վորը մատնանշել ե, թե  
«ուսւածական պրոֆշարժման զարգացման ընդհանուր ընթացքը  
պարզորեն վորոշում ե նշված տեսդինցը պրոֆմիությունների  
կաղմակերպչական զարգացման մեջ արտադրական միություն-  
ների աշխատանքները՝ կենտրոնում և տեղերում միջմիութենա-  
կան միավորումների մեջ ավելի ու ավելի կենտրոնացնելու և  
ալսպիսով աստիճանաբար արտադրական սեկցիաներով միասնա-  
կան միություն դարձնելու ուղղությամբ»:

Զնայած, վոր 1922—23 թվերին խոսքով վերցրված եր  
միության կենտրոն ուժեղացնելու գիծ, փաստորեն Պըոֆմիութ.  
չամ. Կենտր. Խորհրդի հին ղեկավարության պրակտիկան մինչեւ  
պրոֆմիություների VIII համագումարը, արտահայտվել ե ծայր  
աստիճանի կենտրոնացման և ամբողջ աշխատանքը՝ միջմիութե-  
նական կազմակերպություններում կենտրոնացնելու բյուրոկա-  
տիկ ձգտման, պրոֆմիությունների կենտրոնական կոմիտեների  
ինքնազորագությունն արհամարհելու մեջ, մի բան, վոր կապ-  
ված ե յեղել պրոֆմիություններում ինքնաքննադատության  
գեմ վերցրած ընդհանուր գծի հետ և պրոֆմիությունների «ի-  
րեսը գեղակի արտադրություն» դարձնելու դիմադրելու հետ:

Միաժամանակ մենք ունեցել ենք մի այլ ոպղառունիտական, բյուրոկրատիկ ծալքահեղություն։ Հիշեցնում եմ տրոցկիստական «հոչակավոր» Ցեկուրանը և մետաղագործների Շյապնիկովյան վոչ պակաս «հոչակավոր» կենտկոմը։ Թե տրոցկիստները և թե շյապնիկովյականները փորձել են այդ միությունների կենտկոմները վերածել ցեխային, բյուրոկրատական ներփակված կաղմակերպությունների, հակադրված մասցած պլոֆմիություններին։ ամբողջ պրոլետարիատին։

թե մեկը և թե մյուսը հակասում ե մեր կուսակցության լինիսյան գծին, թե մեկը և թե մյուսն արտացոլում ե պրոլետարիատին խորթ հովերը։ Տրոցկիստներն արտացոլում են պետական ապարատի մանր-բուրժուական բյուրոկրատացած, բանվորական մասսաներից կտրված պետակարատի աշխատակիցների «ձախ» ֆրազաներով քողարկվող մասը։ Ըլյապնիկովյանները արտացոլում են բոլշևիզմին խորթ, անիշխանական սինդիկատական գաղափարախոսությունը, Պրոֆմիությունների Համամկենար. Խորհրդի հին զեկավարության աջ պրոֆմիութենական-ներն իրենցից ներկայացնում են պրոֆեսսիոնալիստների բյուրոկրատացած, մասսաներից կտրված մի խմբակի վոր արտացոլում եր մենչեւիկա-կուլակային գաղափարախոսության ազդեցությունը։ Նրանք պրոֆշարժման մեջ մի շաբթ տարիների ընթացքում պատրաստել են տրեգյունիսնիստական զիթը, վորը մասնավորապես իր պրակտիկ արտահայտությունն ե գտել արտակարական միությունների դեղը զարգացնել և ամրապնդել չկամեդրական մեջ, վորովհետև միությունների արտադրական աշխատան-

Քը և յերկըի սոցիալիստական ինդուստրացման մեջ նրա մաս-  
նակցությունն ուժեղացնելն առնասարակ չի հետաքրքրել նրանց:

Մեր ներկա պրոֆմիությունները, Պրոֆմիությունների Համ. կենտր. Խորհրդի նոր ղեկավարության գլխավորությամբ, իրենց հսկայական մեծամասնությամբ արմատախիլ են արել աջ ոպորտունիստական, սինդիկալիստական և տրոցիստական գաղափարախոսությունը: Հենվելով հարվածայնության վրա՝ պրոֆմիությունները յերկան են յեկել վորպես մարտական ուժ հնգամակը չորս տարում կատարելու համար մղած պայքարում: Մեր ներկա պրոֆմիությունները կուսակցության ղեկավարությամբ՝ տանում են միլիոնավոր մասսաներին ուղիղ ճանապարհով: Այժմ ամբողջ խնդիրն այն ե, զոր պրոֆմիություններն ել ավելի լավ կազմակերպեն իրենց պրակտիկ աշխատանքը: Ստեղծել ուղիղ փոխարարերություններ, աշխատանքի բաժանում միջմիութեանական կազմակերպությունների և արտադրական միությունների միջև, մասնավորապես Պրոֆմիությունների Համ. կենտր. Խորհրդի և միությունների կենտրոնների միջև:

Մենք պետք ե պայքարենք թե միջմիութենական կազմակերպությունների մեջ գոյություն ունեցող ունիվերսալիզմի ու դատարկախոսության դեմ, վորոնք արգելք են հանդիսանում բանվորների նախաձեռնությունը յերևան բերելուն արտադրական միություններում, թե առանձին արտադրական միություններում գոյություն ունեցող ցեխային փակվածության ու նեղ գործարքության դեմ:

Ամրացնելով միջմիութենական կազմակերպությունները, վորպես բոլոր միությունները տվյալ տեղիտառիքայի վրա միացնող կազմակերպություններ, մենք պետք եւ վճռաբար ամրապնդենք առանձին արտադրական միությունները վերից մինչև ներքեւ, կենտկոմից մինչև գործարկոմը և տեղկոմը, վորովհետև միայն այդ տեսակ գիծը կարող եւ հեշտացնել պրոֆմիությունների արդյունաբերության ղեկավարությանը կոնկրետ կերպով մասնակցելու գործը, բանվորական մասսաների կարիքներին ու պահանջներին՝ ըստ նրանց արտադրության և պրոֆեսսիայի առանձնահատկության՝ յափագոյն կերպով սպասարկելու:

Դա պետք է իր արտահայտությունը գտնի պրոֆեսազմակերպությունների միջև պարտականությունները կոնկրետ կերպով բաժանելու մեջ:

Վերցնենք պլոփմիությունների հիմական ֆունկցիաները:  
Յեթե փորձենք ամբողջ աշխատանքը բաժանել և վորոշել

թե ում մոտ կենտրոնացնենք արտադրության հարցերը, ապա  
պատասխանը պարզ է. ինարկե՝ միությունների կենտրոններում:  
Մենք այժմ այնպիսի բարդ մեքենաներ ունենք, այնպիսի ուժեղ  
քաղաքանակ արտադրություն և զարգացել մեղ մոտ, վոր ալիս  
հարմար չեն ճեղվ դեկավարությունը: Քիչ և ասել—«ընկեր-  
ներ, բարձրացրեք աշխատանքի արտադրողականությունը»,  
պետք ե կարողանալ այն բարձրացնել:

Յես յեղել եմ Նիժնի-Նովգորոդի ավտոգործարանում, այն-  
տեղ մի մեքենա եմ տեսել, վորին կարելի ե «բարձրագույն կըբ-  
թությամբ մեքենա»: անունը տալ (ծիծաղ): Այդ մեքենան ինքը  
բարդ շտամպներ ե շինում: Զե վոր յեթե այդ շտամպները ձեռ-  
քով շինվեն և դրա համար ամենավրակալ բանվորը տրվի, ապա  
նա ահազին ժամանակ կկորցնի ստանովի մոտ: Պետք ե ուրեմն  
ճանաչել և ուսումնասիրել այդ մեքենան, վորպեսզի այդ մեքե-  
նայի վրա աշխատող բանվորի աշխատանքը ճշտիվ կազմակերպ-  
վի և նորմայացվի: Իսկ իմանալու համար, թե ինչու մեքենան  
այս կամ այն ոպերացիան ե կատարում, պետք ե այդ գործով  
զբաղվել անմիջականորեն: Միությունների կենտրոններն այդ  
բանը շատ լավ պետք ե իմանան և դրանով նրանք համառորեն  
պետք ե զբաղվեն:

Վերցնենք այն բանը, թե մենք ինչքան մեքենա ենք ար-  
տադրում: Մեզնում խորհրդային արտադրության մեքենաների  
ալբոմ ե հրատարակված: Պետք եր այն բաժանել համագումարի  
անդամներին: Տվել են ձեզ, ընկերներ (տեղից—վոչ): Շատ ափ-  
սոս: Դա պետք ե ուղղել, պետք ե հենց ալսոր ալբոմը բերել ու  
բաժանել համագումարի բոլոր անդամներին: Դուք կտեսնեք, թե  
Խորհրդային Միության մեքենաշինական գործարաններն ինչ-  
քան մեքենա են շինում: Իսկ ինչպես վոչ միայն Պրոֆ. Համ.  
կենտր. Խորհուրդը, այլև նույն իսկ միության կենտրոնը ծանոթ  
լինի բոլոր այդ մեքենաներին, թեկուզ իմաստության յոթը մեխ  
ունինա ճակատին: Այդ պատճառով ել միության կենտրոնները  
պետք ե առաջատար պլոփեսիաներում արտադրական սեկցիա-  
ներ ու խմբակներ ունենան: Ուրիշ բան ե կարտոֆել քանդող  
մեքենաների արտադրության գործում աշխատանքի և աշխատա-

գարձի նորմայացումը, ուրիշ բան, մոտորներն ու բարդ մեքե-  
նաները:

Արտադրության հարցերով պետք ե զբաղվեն միություն-  
ների կենտրոնները, իսկ Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի աշխա-  
տանքում ուշադրություն պետք ե դարձնել քննելու այն կոն-  
ֆլիկտներն ու վեճերը, վորոնց առանձին միությունը լուծել չի  
կարող, և նրանցից անցնել ընդհանուր պլանային հարցերին:

Այդ նույն բանը լիովին վերաբերում ե աշխատավարձի  
հարցերին: Ով կարող ե ավելի լավ հասկանալ աշխատանքի  
տարիքացումը և նորմայացումը, յեթե վոչ տվյալ արդյունա-  
բերության կենտրոնը:

Աշխատավարձի և աշխատանքի կազմակերպման բնագավա-  
ռում Բնչ գունկցիաներ պիտի ունենան Պրոֆմիությունների Հա-  
մամիութենական կենտրոնական Խորհրդի ձեռքին: Որենսդրու-  
թյունն աշխատանքի մասին, կոլեկտիվ պայմանագրերի վերա-  
բերմամբ, ծանր արդյունաբերության ժողկոմատի, թեթև արդու-  
նաբերության ժողկոմատի և այլոց հետ դիրեկտիվներ սահմա-  
նելիս ընդհանուր նորմաներ և ցուցմունքներ, Բայց աշխատա-  
վարձի հարցերում գլխավոր գունկցիաները պետք ե լինեն միու-  
թյունների կենտրոնների մոտ:

Վերցնենք հարցերի մի այլ խումբ—«սոցիալ-կենցաղային»  
հարցերը: Տեղին ե ասել, վոր «սոցիալ-կենցաղային» կոչումը  
չափազանց անմիտ, վոչինչ չարտահայտող կոչում ե: Դուրս ե  
գալիս, վոր այդ «սոցիալ-կենցաղային» հարցեր իմաստակային  
կոչման մեջ պարունակում են տասնյակ կարևորագույն գունկ-  
ցիաներ՝ մատակարարում, կարտոշկա... Պրոֆմիություններն այն  
դարձնում են «սոցիալ-կենցաղային կարտոշկա» (ծիծաղ, ծափա-  
նարություններ), ճաշարաններ, սոցիալիստական ապահովագրում  
և այլն:

Հենց այստեղ լես պետք ե ընդգծեմ, վոր սոցապն, ընկեր-  
ներ, դա միլիարդավոր ուռելի ե: Յեկ յերբ մի քանի պլոփմիու-  
թենականներ գանգատվում են, թե տնտեսավարներն իրենց  
կարգագրության տակ փող ունին, մեքենաներ ունին, իսկ մենք  
պլոփմիութենականներ ենք կարգագրության տակ վոչ մի նյու-  
թական բան չունենք (ծիծաղ), ապա յես որինակի հսմար հիշեց-  
նում եմ սոցապնի այդ միլիարդները—կարգագրեցեք, կարողա-

ցեք այդ փողերն ոգտագործել ուսցիսնալ կերպով՝ բանվոր դասակարգի լայն մասսաների համար:

Ապա—աշխատանքի պաշտպանությունը, բնակարանային շինարարությունը, մատակարարումը, բանջարանոցները—այդ բոլորը միացվում ե մի խորիմաստ անվան տակ—«սոցիալ-կենցաղային» ֆունկցիաներ: Յեվ ահա, յեթե սահմանագծենք այդ ֆունկցիաները, ապա ով ինչի վրա պիտի կենտրոնանա:

Սոցավլ.—Գոյություն ունին արտադրական և ընդհանուր դրամարկղներ: Հստ յերեսութին ամրող սոցավով պետք ե զբաղվի Պրոֆմիությունների Համամիութենական կենտրոնական Խորհուրդը, իսկ արտադրական դրամարկղներով—միությունների կենտրոնը:

Աջանաների պահանջանարկությունը.—Այստեղ զվաճակոր գործը պետք ե անի կենտրոնը: Պրոֆմիությունների Համամիութենական կենտրոնական Խորհուրդը՝ Աշխատողկոմատի հետ միասին պետք ե զբաղվի աշխատանքի պահպանությանը վերաբերող որենսդրության հարցերով: Ձեռնարկներում աշխատանքի պահպանության կոնկրետ կազմակերպումը—դա արտադրական միությունների գործն է:

Ով պետք ե աշխատանքի պաշտպանության գործով զբաղ վի քարածուիի արդյունաբերությունում: Ինարկե, ածխանատների միությունը և ամենից առաջ այդ միության կենտրոնը:

Բնակառուցում.—Այստեղ ըստ յերեսութին յերկու ուղի կլինի: Այն ինչ, կոմունալ շինարարությանն ե վերաբերում, դա մնում է Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի և միջմիութենական կազմակերպությունների (Շրջ. Պրոֆ. Խորհրդի և ռայզըրոֆիորհրդների վրա), ինչ վերաբերում ե արդյունաբերական և բնակարանային կառուցմանը, ապա այդ հարցերը միությունների կենտրոնների ձեռքին կլինեն:

Մատակարառում.—Բանվորների մատակարարման հարցերով ամբողջապես պետք ե զբաղվեն Պրոֆ. Համ. կենտր. Խորհուրդն ու միջմիութենական կազմակերպությունները, վորովհետեւ դա կազմած ե համապետական որգանների աշխատանքի հետ: Բայց ձեռնարկության փակբանկուակի և ճաշարանի գործով պետք ե զբաղվեն արտադրական միությունները: Առանձնապես գործարանի ճաշարանը—դա ուղղակի գործարկումի—արտադրական միության հիմնական բջիջի գործն է:

Կուլտուրայի հարցեր.—Այստեղ պետք ե գլխավոր գործը գցել Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի վրա: Այդ գեղաքում տեխնիկային տիրապետելու հարցերը, կուլտորաժնից, ինարկե, արտադրական միություններին կանցնեն, իսկ ընդհանուր կուլտուրականությունը՝ լիկայան, դպրոցներ, խելացի հանգստություն, ոգնություն պիոններական կազմակերպություններին և այլն Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդին:

Կարգեր.—Արտադրական միություններին պետք ե անցնեն արտադրության և հիմնարկությունների համար կազրեր պատրաստելու գործը: Ինչ պրոֆմիութենական կազրերին ե վերաբերում, ապա արտադրական միություններն այստեղ պետք ե իրանց համար կազրեր պատրաստեն, իսկ միջմիութենական կազմակերպությունները պետք ե ողնուն սակավակարող միություններին՝ վերահսկողություն և մեթոդիկ ղեկավարություն կիրառելու, ինչպես և միջմիութենական կազմակերպությունների համար կազրեր պատրաստելու գործը տանել:

Պրոֆ. Համ. կենտր. Խորհուրդն ու մյուս միջմիութենական կազմակերպությունները պետք ե անմիջականորեն ղեկավարեն պլրոֆմիությունների շեֆային աշխատանքը (գյուղի, Կարմիր բանակի վերաբերմամբ), վորտեղ պրոֆմիությունները պետք ե մասնակցեն պետապարատի բարեկավմանը, միատեղ աշխատելով Բանգյուղեսչության որգանների հետ և այլն:

Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի վրա պետք ե մնա միջազգային աշխատանքը: Ինարկե, արտադրական միությունները նույնպես միջազգային կապ կունենան մյուս յերկրների պրոֆմիությունների հետ, սակայն ընդհանուր ինտերնացիոնալ աշխատանքն ու կազմ պետք ե լինի Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի ձեռքում:

Վեհակագրությունը ու հաշվեառումը պետք ե մնա Պրոֆ. Համ. կենտր. Խորհրդի վրա:

Պրոֆ. Համ. կենտր. Խորհուրդն ու պրոֆխորհներն իրանց աշխատանքի ծանրության կենտրոնը պետք ե դարձնեն կատարման ստուգումը,

Պրոֆ. Համ. կենտր. Խորհուրդն ու միջմիութենական կազմակերպությունները պետք ե վոր մի խումբ բարձր գործակի

հրահանգիչ-տեսուչներ կամ վերահսկիչներ ունենան, վորոնք ստուգեն թե Պրոֆ. Համ. Կենտր. Խորհրդի և միջմիութենական կազմակերպությունների հրահանգներն ինչպես են կատարում համապատասխան արտադրական միությունները: Կատարումն ստուգելու հարցերը բացառիկ կերպով են աճում Պրոֆ. Համ. Կենտր. Խորհրդի համար: Այդ հարցերը պետք են որա աշխատանքի կենտրոնում գտնվեն:

Հետեաբար՝ միությունների կենտրոնները պետք են իրանց գլխավոր ուշադրությունը դարձնեն արտադրության և աշխատանքը կազմակերպելու ու աշխատավարձի և աշխատանքի նորմայացման, աշխատանքի պաշտպանության, բնակարանային-արդյունաբերական շինարարության հարցերի վրա, կադրերի վրա (արտադրական և իրանց համար), մատակարարման հարցերի վրա՞ ճաշարանների, փակբանկոպների աշխատանքի վերաբերմամբ և այլն:

Պրոֆ. Համ. Կենտր. Խորհուրդն իր աշխատանքում գլխավորեն պետք են ուշադրությունը կենտրոնացնի մատակարարման ընդհանուր հարցերի վրա, աշխատանքի որհնադրության, կոլլեկտիվ պայմանագրերի, ընդհանուր նորմաների, կուլտուրական աշխատանքի, կադրերի ընդհանուր հարցերի, և միջմիութենական կադրեր պատրաստելու, վիճակագրության, հաշվեառման, միջնագույն աշխատանքի և կատարման ստուգման հարցերի վրա:

Ահա աշխատանքի մոտավոր բաժանումը միջմիութենական կազմակերպությունների և արտադրական միությունների միջև:

Յես կարծում եմ, վոր համագումարից հետո Պրոֆ. Համ. Կենտր. Խորհուրդը կմշակի վոչ միայն Պրոֆ. Համ. Կենտր. Խորհրդի և միությունների կենտրոնների միջև յեղած փոխհարաբերությունների, ալ և գործարկումների ու տեղկումների աշխատանքի վերաբերմամբ յեղած այդ բոլոր հարցերը:

Պորձարկումներն ու տեղկումները պետք են ավելի մեծ տեղ գրավեն պրոֆմիությունների ամբողջ աշխատանքում, քան մինչև այժմ են գրավել: Դա, ուղիղն ասած պրոֆմիութենական աշխատանքի հիմքն են, վորովհետև բանվորական մասսան ֆարբիկներում ու գործարաններում և կենտրոնացած: Պրոֆմիությունների վերին և միջին ողակների աշխատողները պետք են իրենց

ժամանակի մեծ մասն անցկացնեն ձեռնարկություններում, Փարգործարկումներին ոգնելով, վոր լավագույն կերպով կազմակերպեն մասսաներին և իրացնեն կուսակցության և պրոֆմիությունների հրահանգները:

## 2. ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՄԱԳԻ ԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բնական ե, վոր միայն պարտականությունների բաշխումն ու նրա ուղիղ կազմակերպումը հարցը դեռ չի լուծում: Սակայն կազմակերպչական ուղիղ կառուցվածքը հեշտացնում և պրոֆմիությունների աշխատանքն ըստ եյության ուղիղ գնելը:

Իսկ ինչն են հիմնականը, ամենաեյականը հանդիսանում պրոֆմիությունների աշխատանքում:

Պրոֆմիությունների զանազան ետապների խնդիրները նաև լուց մենք տեսնում ենք, վոր պրոլետարական դիկտատուրայի բոլոր ետապներում պրոֆմիությունների հիմնական դերը—կոմունիզմի գպրոցի գերն ե: Յուրաքանչյուր առանձին ետապում փոխվում են բովանդակության առանձին տարրերը, պրոֆաշխատանքի ձևը, սակայն մնում ե գլխավորը—կոմունիզմի գըպրոցի ֆունկցիան:

Հետոնկտեմբերից անմիջապես հետո յեղած ժամանակաշրջանում պրոֆմիությունները բանվորական հսկողության իր ականացման հետ միասին՝ իրանց վրա են վերցրել արտադրությունը կազմակերպելու և ձեռնարկությունները կառավարելու աշխատանքը: Պրոֆաշխատողների շարքերից հիմնականում տնտեսավարների կադրեր են ձևակերպվել հեղափոխության առաջին տարիներում: Ֆարբորձարկումները, բանվորական հսկողության որգաններն ու պրոֆկազմակերպությունները մի հզոր դարբնոց են հանդիսացել վորտեղ խորհրդային ձեռնարկությունների ապագա հրամանատարներն են դարբնովել:

Պազմական կոմունիզմի ժամանակաշրջանում ֆրոնտի համար պրոֆմիութենական մորիլիկացիա կատարելով, հացի համար պայքարի պարեն-ջոկատներ կազմելով միությունները բանվորական մասսաների մեջ ընդհանուր դասակարգային շահերի գիտակցություն, բանվորների առանձին խմբերի մասնավոր շահերը պրոլետարիատի գործին, խորհրդային իշխա-

նության գործին զոհելու պարտականության գիտակցություն են մտցրել գործնականորեն։ Շաբաթորյակները և ֆրոնտը զենք, հազուստ, վոտնաման, պարեն հասցնելու հերոսական աշխատանքը քաղաքացիական կովի ֆրոնտներն ամրապնդելու աշխատանքի անմիջական շարունակությունն են յեղել։ Պրոֆմիություն ները հզոր ռեզերվուարներ են յեղել, վորտեղից խորհրդային իշխանությունն ու Կարմիր բանակը լավագույն մարտիկներն են ստացել բանվոր դասակարգի գործի համար։ ՆԵՊ-ին անցնելով կուսակցությունն առանձնապես շեշտել ե պրոֆմիությունների գերը։ Հնկ. Լենինը վիճաբանելով տրոցկիստների ու հաշտվողականների հետ 1921 թվի պրոֆմիութենական դիսկուսիայի ժամանակ գրել ե. —...իո թե «մի կողմից դպրոց, մյուս կողմից մի ուրիշ բան», այլ ամեն կողմից ավյալ վիճաբանությունում յել Տրոցկու կողմից հարցի տվյալ դրույրով, —պրօֆմիությունները դրաբոց են, դպրոց միացման, դպրոց համերաշխուրյան, դպրոց սեփական շամերը պատճառանելու, դպրոց տիրություն անելու, դպրոց կառավարելու։ Փոխարեն Տրոցկու այդ արմատական սխալը հասկանալու յեկ ուղելու, բնկ. Բուխարինը ծիծաղելի ուղելում ե սվել. — «Մի կողմից՝ մյուս կողմից» (Լենին. «Դարձյալ պրոֆմիությունների մասին»)։

Տեսնում եք, թե ինչպիսի լայնությամբ ե լենինը դնում պրոֆմիությունների հարցը վորպես կոմունիզմի դպրոց, «դպրոց միացման, դպրոց համերաշխության, դպրոց սեփական շահերը պաշտպանելու, դպրոց կառավարելու»։

Պրոֆմիությունների, վորպես կոմունիզմի դպրոցի լենինյան վորոշումը, —վոր կենտրոնական ե պրոֆմիությունների մասին լենինյան ուսմունքի մեջ, —ամենից շատ աղավաղել են ոպրոտունիստները, ամենից շատ նրանց դիմադրությանն ե հանդիպել։

Տրոցկին աշխատել ե պրոֆմիությունները դարձնել տնտեսողանսերին կից ոժանդակ մի բյուրոկրատական ապարատ, ինչ վոր մի միջին բան քաղբաժների ու աշխատանքի եկոնոմիկայի բաժիների միջև։ Շլապնիկովն իրանից տրոցկիստական դրամի մյուս յերեսն եր ներկայացնում և վորպես հակաշիռ պրոֆմիությունների տրոցկիստական «պետականացման», առաջարկում եր «միութենականացնել» պետությունը, արդյունաբե-

րությունը կառավարելու գործը պրոֆմիություններին հանձնելով, այսինքն՝ դարձյալ վոչնչացնել պրօֆմիությունները, վորպես կոմունիզմի դպրոց։

Պրոֆմիությունների, վորպես կոմունիզմի դպրոցի գերը ոպրոտունիստորեն աղավաղել են և աջ պրոֆաշատողները՝ Տոմսկու գլխավորությամբ։ Նրանք կոմունիզմի դպրոցի բովանդակության մեջ փոփոխություններ չեին տեսնում պրոլետարիատի դիկտատորաբայի զանազան ետապներում, մասնավանդ վերակառուցման ժամանակաշրջանում։

Մենշևիկատրոցկիստական վոգով բանվորների շահերը հակադրելով սոցիալիստական արդյունաբերության շահերին, պրոֆմիությունների պաշտպանման ֆունկցիաները նրանց արտադրական աշխատանքին, նրանք կամ ընդհանրապես լուսական են տվել պրոֆմիությունների, վորպես կոմունիզմի դպրոցի գերը, կամ միակողմանի կերպով մեկնաբանել կոմունիզմի դպրոցի բովանդակությունը, վորպես միացման դպրոցի, սեփական շահերը պաշտպանող դպրոցի, ուրես ցցերով լենինյան վորոշումները «տերություն անելու դպրոցի, կառավարելու դպրոցի, սոցիալիստական արդյունաբերությունը (հետո ել աստիճանաբար նաև հողագործություն) կառավարելու դպրոցի» գերը։ Այստեղից ել բյուռն և նրանց՝ կուսակցության մեջ յեղած աջ ուղղունիստների կուլակային քաղաքականությանն աջակցությունը։

Բանվոր դասակարգը մի տեղ կանգնած չի մնում։ Նա փոխվում ե, աճում ե։ Նրա շարքերն են ներհոսում հարյուր հազարավոր, միլիոնավոր նոր բանվորներ։ Որինակ, Մոսկվայի լավագույն գործարանի՝ Ստալինի անվան ավտոգործարանի բանվորների 90 տոկոսը նոր, զեռ յերեկ գյուղական տնտեսությունում աշխատող յերիտասարդ բանվորներ են։ Զե վոր նրանց հարկավոր և դաստիարակել վերափոխել։

Հնկ. Մտալինը «լենինիզմի հարցերի առթիվ» աշխատությունում պրոֆմիությունների մասին այսպես ե գրել.

«Պրօֆմիությունները կարելի ե մեզ մոտ սիրապետող բանվորակարգի զիսովին կազմակերպություն անվանել։ Նրանք կոմունիզմի դպրոց են հանդիսանում։ Նրանց շարքերից ընտրում են լավագույն մարդկանց՝ կառավարելու, բոլոր նյութերում դեկավար աշխատանք տանելու համար։ Նրանք կապ են հաստատում բան-

վոր դասակարգի կազմում յեղած առաջակորների յիշ հետամնացների միջև: Երանէ բանվրական մասսաներին միացնում են բանվոր դասակարգի ավանդարդի հետ:

Խնդրում եմ ուշադրություն դարձնել այս կլասիկական ձևակերպման վրա, վորը մեզ բոլորիս համար բացառիկ կարեռ նշանակություն ունի, «իրականացնում են կապն առաջավոր և հետամնաց» բանվորների միջև:

Մեզանում հետամնաց բանվորներ դեռ շատ կան: Մենք չպետք ե շողոքորթենք բանվորներին. դա չկա մեր բոլցեիկյան սովորություններում: Նոր բանվորների մասսաները, վոր պողետարիատի շարքերն են ներհոսում, հաճախ իրանց հետ մանրառութուական մնացորդներ ու տրամադրություններ են բերում ձեռնարկությունները: Առաջավոր բանվորները պետք ե իրենց հետեւյց տանին հետամնացներին: Դա նշանակում ե՝ հետամնացներին բարձրացնել մինչև առաջավորների մակարդակը, դա նշանակում ե չվատաքանել, չհայնուել, չգրգռել այլ դեկավարել հետամնացներին, դաստիարակել նրանց քաղաքականապես, տնտեսականորեն ու կազմակերպչորեն:

Այսոր, յերբ մենք դասակարգային թշնամու դեմ դաժան պայքար ենք մղում բոլոր ֆրոնտներում, պայքար գժվարությունների դեմ, այսոր, ընկերներ, համախմբված ավանդարդի հարցը, առաջավոր բանվորներ ջոկելու հարցը, նրանց կողմից հետամնաց բանվորներին ղեկավարելու հարցը բացառիկ խոշոր նշանակություն ունի մեր ամբողջ սոցիալիստական շինարարության բախտի համար: Նոր գիտցիկինայի դաստիարակությունն, ինչպես քանից շեշտել ե լենինը, պրոլետարիատի դիկտատուրայի որոք դասակարգային պայքարի հիմնական ձևելիք մեկն ե հանդիսանում: Յեզ այդտեղ առանձնապես մեծ ե պրոֆմիությունների դերը:

Ինձ հաղորդել են, թե առանձին ընկերներ հարցնում են իսկ լերկորդ հնգամյակում պլուֆմիությունները հարկավոր կլինին, արդյոք:

Ինքնին համկանալի ե, վոր զբուցներն այն մասին, թե լերկորդ հնգամյակում, անդասակարգ հասարակությունները կառուցելու հետ կապված պրոֆմիություններն ավելորդ կլինին՝ վոչ մի քննադատության չեն դիմանում:

Զի կարելի անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը բաժանել պրոլետարական դիկտատուայիթ-վոր պես դասակարգերի վերացման հզոր լծակի, ամրապնդումից: Մենք պետք ե այդ հարցերում առանձնապես զգաստ ու վորոշակի լինինք, վորովհետեւ այժմ, անդասակարգ հասարակություն կառուցելու ժամանակ փորձում են կպչել պետության մահացման լոգունգից դասակարգային խորթ տարրերը, վորոնք հաճույքով ըստ իրենց ուրախանում են պրոլետարական պետության «արագացրած մահացման» համար հենց այն պատճառով, վոր նա պրոլետարական ե:

17-րդ կուսկոնքորանսը միանդամայն իրավացի եր, յերբ շեշտել ե «աշխատավորների առանձին խալերի ու խմբակների վրա բուրժուական ազդեցուրյունների պահիլու, խսկ վորու դեպերում յիշ ուժեղանալու անխուսաժինուրյունը, դեռ յեվս յերկար ժամանակ պրոլետարիատին խորք դասակարգային ազդեցուրյունները բան վորների յիշ նույն խսկ կուսակցուրյան շարքերը ներա բափանցելու անխուսաժինուրյուն», միենույն ժամանակ ավելացնելով, վոր «այդ պահնառով՝ կուսակցուրյան առաջ կանգնած ե պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման յիշ ոպորտունիզմի դեմ, մանավանդ, ներկա հետապում զիսավոր վտանգ հանդիսացող աջ քեման դեմ հետապա պայման անդառնելու խնդիրը»:

Ինչպես տեսնում եք, մենք բոլցեիկորեն, լենինյան ձեռվ ենք հասկանում պայքարն անդասակարգ սոցիալիստական հասարակության համար:

Մենք այդ լծորդում ենք պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման խնդրի հետ: Հետեւաբար աճում ե պրոֆմիությունների, վորպես պրոլետարական դիկտատուրայի վորոնաշը, վորպես կոմունիզմի գպրոցի դերը, զպրոց, վոր տանյակ միլիոնավոր աշխատավորներից «սոցիալիստական անդասակարգ հասարակության գիտակից, ակտիվ կառուցողներ» ե վերադատիբարակում: Վորպեսզի նըանք դառնան անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից կառուցողներ, անհրաժեշտ ե համապատասխան կերպով դաստիարակել բանվորական լայն մասսաներին:

### Յ. ԶՅՎԵԼ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ, ԳՏՆԵԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՂԱԿԸ

Այդ պայմաններում պրոֆմիությունների աշխատանքի հետագա բարելավման հարցը բացառապես կարևոր է: Դեռ մինչեւ այժմ կան պրոֆմիությունների առանձին գործիչներ, վորոնք լրիվ կերպով չեն հասկանում պրոֆմիությունների գերն ու նշանակությունը ներկա հտապում:

«Յեթե յես գործարանի կամ տրեստի դիրեկտոր լինեի, — մտածում ե այդպիսի աշխատողը, — այն ժամանակ պարզ ե գործը: — կարգադրիր ու կառավարիր: Իսկ գործարկութիւնականը և միության կենտկոմի նախագահն ել իրանց տրամադրության տակ փող չունեն, հրամաններ չեն գրում», այստեղից ել նայելը աշխացնում ե, թե պրոֆմիությունը քիչ բան կարող ե անել: Իսկ վոմանք ել հարցը խորացնում են և ասում: «Յերբ վատ ե, ապա պրոֆմիությունից են հարցնում, իսկ յերբ լավ ե՝ ուրիշներին են վերադրում, իսկ պրոֆմիությանը՝ վոչինչ» (ծիծաղ, ծափահարույուն):

Շատ եք ծափահարում, ընկերներ, այդպիսի դատողությունների հետ չի կարելի համաձայնել: Թույլ տվեք կանգ առնել զրանց վրա, վորովհետև դա ցավոտ հարց և նաև մի քանի նոր պրոֆգործիչների համար:

Պիլատորն, իհարկե, հրամանները չեն և վոչ ել վարչարարությունը: — պրոֆմիութենականների աշխատանքի գլխավոր պատուհան այն ե, վոր նրանք իրանց աշխատանքում ցրվում են, կպչում ամեն բանի և «հավասարություն» սահմանում իրանց բոլոր փունկցիաների միջև: Սակայն պատասխանել բոլորի համար չես կարող, թեկուզ իմաստության յոթը մեխ ունենաս ճակատումք, պետք ե կարողանալ աշխատանքի մեջ գլխավորն ընտրել:

Շատ պրոֆաշխատողներ կպչում են ամեն բանից «վորպիսի մարդիկ չնախատեն»: Համախ պրոֆաշխատողը մտածում ե այսպես: — «Այս յես զեկուցում կտամ: Յեթե խնդիրներից մեկի մասին չխոսեմ՝ ինձ մի անդամից կզգեն: Չե, վոր աղպես ե, յես բոլորը կասեմ: ինձ բռնել չես կարող: յես նրանցից չեմ» (ծիծաղ): Կամ նստել ե մարդը, աշխատում ե ու մտածում: «կա

րահանգիչը կամ մամուլի աշխատողն ինձ հետազոտելու և կգրտ նի, վոր միությունը վատ և ուշագրություն դարձրել այս ինչ հարցին: Ե՞, յես նրանցից չեմ. ինձ բռնել չես կարող: Յես ցուց կտամ, վոր դրան ել եմ մի պատառ ուշագրություն դարձրել, այդ կտամ, վոր դրան ել եմ մի պատառ ուշագրության մեջ մտցրած: Յեվ կոլմասին ել յես ունիմ արձանագրության մեջ մտցրած: Յեվ կոլմասին ել յես նրան արձանագրության մասսաներին, և հաշարանի, խողի, և կուլտուրացի, և տեխնիկան մասսաներին, և հաշարանի, խողի, և կուլտուրացի, և տեխնիկան մասսաներին, բոլորի, բոլորի մասին մի մի պակամագոր ընկերությունների, բոլորի, բոլորի մասին մի մի պակամագոր ընկերություններին, բանաձնելու հավասարած հավասարանք աշխատառած տառ կա»: Ուրիշ կերպ ասած համատարած հավասարանք աշխատառած տառքում: — յուրաքանչյուրին մի պատառ:

Իրոք ինչ ե ստացվում այդպիսի աշխատանքից: Լավ վոչինչ չի ստացվում: Զե վոր բանվորներին թղթե վորոշումներ չեն չիմանց համար կարեոր և իմանալ թե լավացել ե, արպետք, — նրանց համար կարեոր և իմանալ թե լավացել ե, արպետք, գործը: Մի քանի պրոֆկազմակերպություններ չափազանց դուք, գործը: Մի քանի պրոֆկազմակերպություններին, բանաձնելու մինչեւ յերբեմն առանց վորոշումներին, բանաձնելու մինչեւ յերբեմն առանց վորոշումներին, բանաձնելու մինչեւ յերբեմն առանց վորոշումներին, բանաձնելու մինչեւ յերբեմն առանց վորոշումներին:

Մենք չպետք ե ցըկենք. այլ պետք ե հարցը դնենք աշխատանքի գլխավոր ողակների մասին, այնպես, վոր իմանանք, թե վոր ողակից բռնենք, վորպես գլխավորը: Միմիայն այդ գեպ թե վոր ողակից բռնենք, վորպես գլխավորը: Միմիայն այդ գեպ աշխատանքի լուրջ հաջորդության հույս ունենալ:

Փորձենք մի քանի վճռական ողակներ նշել: Յեթե վորպես յելակետ, վորպես աշխատանքի մարտական ծրագիր վերցնենք ընկ. Ստալինի վեց ցուցմունքներն, ապա ծրագիր վերցնենք ընկ. Ստալինն այդ ցուցմունքները տվել ե պետք ե շեշտել, վոր ընկ. Կազմակերպությունների, կուսակցական բոլոր պարունական կազմակերպությունների, խորհրդային ու կոմիտեների տեսական որգանների, կոմիտեացիայի ու պրոֆմիությունների համար: Սակայն այդ կազմակերպություններն ամենալին չպետք իրար կրկնեն, զուգընթացաբար կատարեն միևնույն աշխատանքի Յուրաքանչյուր կազմակերպություն պետք ե իր առանձանքը: Յուրաքանչյուր կազմակերպություն պետք ե իր առանձանքը: Եթե վորի մասին ասեինք, թե «այս բնագավառը քոնն ե» «այս՝ քոնը», իսկ միունների հետ դու գործ չունիս:

Ի հարկե, մեղնում չի կարող տեսչութենական բաշխում լինել, վորի մասին ասեինք, թե «այս բնագավառը քոնն ե» «այս՝ քոնը», իսկ միունների հետ դու գործ չունիս:

Սակայն յուրաքանչյուր կազմակերպության աշխատանքի վրա գործ դնվող ուժը պիտք ե տարբեր լինի: Որինակ՝ կուսակցությունը պատասխանառու ե ամեն բանի համար, միացնում ե բոլորին, նա ղեկավարում ե պրոետարիատի դիկտատուրայի բոլորին, որպահները, բայց կուսրջիջն ել իր գլխավոր ողակն ունի:

Վորոն ե գործարանային բջիջների, ուսկզոմների գլխավոր ողակը: Նրանց գլխավոր ողակը նրանում ե կայանում, վոր պայքարեն կուսակցության հիմնական գիծը տանելու, վոր կուսակցությունը դաստիարակեն վորպես առաջատար ավանդարդ, վորն աշխատում ե բոլոր որդաններում, քաղաքականապես ղեկավարում ե մասսային, կուսորդանները չպետք ե իրանց ծանրաբեռնեն խորհրդային, պրոֆմիութենական ու տնտեսական աշխատանքի ամեն տեսակ մանրամասնություններով: Պետք ե ղեկավարել գործարկումը, պետք ե ղեկավարել ուսյալորդիուրի, յերկրային պրոֆիլորդին, սակայն չպետք ե իր վրա վերցնել բոլոր մանրամասնությունները, աշխատանքի ամբողջ պրակտիկայի բոլոր առանձին ճյուղերը, չպետք ե իրենք այդ որդաններին վոխարինեն:

Տնտեսավարն ամենից առաջ պատասխանառու ե տնտեսության համար: Նա, իհարկե, պատասխանառու ե բանվորների մատակարարման ու նրանց սպասարկման համար, սակայն գըլխավորը, դա արտադրության կազմակերպումն ե. այն, վոր կոտրտումներ, պրաստոյներ չլինեն, վոր բանվորը դրանից չտուժի, վոր ուսցիոնալացում կատարվի, իջնի ինքնարժեքը, բարձրանարտակը վորակը, կատարվի արդգինալվանը:

Յերեմին մեզ մոտ՝ կենտկոմ կամ Մոսկոմ են գալիս ձեռնարկությունների «յեռանկյունիները»—գործարկոմի նախագահը, կուսկոմի քարտուղարն ու դիրեկտորը: Հարցնում ես.—«Դե, ընկերներ, վորոնք են ձեր գործարանի ամենացավոտ կողմերը»:

—«Դե դիտեք, մեզ պակասում են այս ինչ մեքենամասերը, այս ինչ մեքենաները».—ասում ե դիրեկտորը: Նույն ե կրկնում և կուսկոմի քարտուղարը, նույն պատասխանն ե տալիս գործարկոմի նախագահը:

Թվում ե, թե դիրեկտորն ամելի լավ զիտի արտադրությունը—ամենից առաջ պատասխանառու յեղիք նրա համար: Պրոֆաշխատառն ամենից առաջ պատասխանառու ե բանվորների համար, նրա համար, վոր նրանց կարիքները լուծի, վոր աշխա-

տանքի նորմացումը ճիշտ լինի: Ի՞նչ դուրս կգա նրանից, վոր գործարկոմի աշխատողը պիտք ե ցուցադրի իր «պետական աշխարհայեցողությունը» և մտավոր հորիզոնը «համաշխարհային մասշտաբով», բայց միենույն ժամանակ չտեսնի աշխատանքի կազմակերպման մեջ յեղած խայտառակությունը, աշխատավարձի կազմակերպման մեջ կնոջը (մանածագործագումարից) ավելին ծախսելը, կամ կծկող կնոջը (մանածագործագումարից) ավելին ծախսելը կուրի արկղն և կրում, աշխատավարձն անիրավացի կերպով ամսեկան 6 ոուբլի իջեցրել են: Պետք եր, վոր Մոսկոմի քարտուղարը փարբեկը գնար, վոր բանվորունին գանգատվեր ու վերացվեր անարդարությունը: Ե, ել վորունին այդ պատասխան աշխարհայացքը», ի՞նչ նշանակություն ունի այդ «պետական աշխարհայացքը», ի՞նչ գործարկոմի աշխատողը չի նկատում բանվորների աշխատավարձը տարրական հարցերը: Մեզնում գործարկոմներն անսասելի կերպով ցրվում են, նրանք ահազին քանակությամբ սեկտորներ ունին: Պետք ե հասարակացնել գործը, կրամատել սեկտորների թիվը և գործն այնպես դնել, վոր գործկոմները կենտրոնանան գլխավորի վրա, պառաջին հերթին պատասխանառու լինեն աշխատավարձի, աշխատանքի նորմացման, ճաշարանների, բանվորների մատականարման, աշխատանքի պահպանության և բնակարանների հարաբերության մարմար: Իսկ գործարկոմում այդ հարցերը կանգնած են մյուս խընդիրների շարքում կամ նույն իսկ նրանից հետո:

Դուք գործարկոմում ունիք կազմակերպչական, տեղեկատուի, կուլտաշխատանքի, ազիտ մասսայական (թեև ագիտացիան տատ վաս ե դրված) սեկտորներ, աշխատավարձի սեկտոր, արշատադրական խորհրդակցությունների սեկտոր, գյուղում աշխատադրական սեկտորների սեկտոր, և դարձյալ սոց-կենցաղային համապարփակ սեկտոր (ծիծաղ), վորտեղ մոցրված են մատակարարման, բնակարանների, աշխատանքի պահպանման, հասարակական սնունդի հարցերը, հետո գալիս ե ինժեներատեխնիկական սեկտորն, կամ հարցերը, իսկ այս գալիս ե ինժեներատեխնիկական սեկտորն, կամ հարցերը ընկերությունների բուլորոն: Դե համեմեք, պատասխանավորը ընկերությունների բուլորոն: Պետք ե բեռնարափ անել գործարկոմի աշխատողին, երա աշխատանքը կենտրոնացնել զիտավորի վրա:

Տեսեք, թե ինչպես ե աշխատում գործարկոմի գործիչը: Ես իր ժամանակ հատկապես ստուգել եմ այդ բանը: Նա առաջայն գործարան և մանում և մտածում: «Դեհ, այսոր կզնամ

յեխն ու կզբաղվեմ աշխատավարձով»։ Նա գործարկումում հանդիպում ե 10—15 հոգու, վոր իրան են սպասում։ Նրան հալից գցում են։ Ժամը 3·ին հնատագոտելու և գալիս հրահանգիչը, ժամը 4·ին նրան կանչում են միություն և այդպես անցնում ե ամբողջ որը։ Հալից ընկել ե, չկարողանալով հիմնական հարցերը ջոկել ու լուծել—բանվորների կարիքների հարցերը, աշխատավարձի ու աշխատանքի կազմակերպման հարցերը։ Դա պետք ե արմատապես փոխել։

Շատ են գործարկումի ուժերը։ Հարվածալինները—ահա նրա հիմնական ուժը, նրանց վրա պիտի հենվել։ Հարվածայինները կենտրոնական դեմք են պրոֆմիություններում։

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ—ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱՎԱՐԳԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՏԱՑՈՒՄԸ

Իրոք, ինչ ե կատարվում այժմ համաշխարհային եկոնոմիկայում: Արգյունաբերական արտադրությունը, յեթե վերցնենք համաշխարհային արտադրանքն, ընկնում ե: Ապրանքահեղուումը

բոլոր յերկրներում ահագին ե, ցնցող: Վոչ վոք չկա, վոր ապրանք առնի: Բոլոր յերկրներում գյուղական տնտեսության խոր կրիզիս ե և գարկարին ու դրամական սիստեմի կրիզիս ե: Այդ կրիզիսն այնքան խոր ե, այնքան սուր, վոր նամինչեւ իսկ ըուրժուազիալի իդեոլոգների կասկածներն ե հարուցում՝ կապիտալիստական սիստեմի գոյության հետագա հնարավորության վերաբերմաժք:

Սահանկացումների քանակությունը կրիզիսների պատմության մեջ իր նմանը չունի: Ներմուծման և արտահանության հսկայական կրճատում, կապիտալաներդրումների գրեթե լիակատար դադարում:

Խոշոր բանկերի, ինչպես որինակ Գերմանիայի Դանատ-բանկի և այլն և այլն փլուզումը խոշորագույն կոնցերների, ինչպես որինակ՝ կրեյդերի կոնցերնի փլուզումը, — ահա համաշխարհային կապիտալիստական եկոնոմիկայի ընդհանուր ֆոնը:

Կերջին 2<sup>1/2</sup> տարում կրիզիսը հասցըել ե բանվոր դասկարգի կենսական մակարդակի հսկայ սկան ցածրացմանը և, ամենից առաջ, աշխատավարձի կրճատմանը:

Բայց չե վոր, բացի աշխատավարձի ուղղակի իջեցումից, բանվոր դասակարգի վրա ընկած և հսկայական գործազրկության ծանրությունը, վոր մեր հաշիվներով հասնում ե 48 միլիոնի, առանց գաղութների, առանց մի ամբողջ շարք յերկրների և աշխատանքի ճյուղերի, վորոնել գործազրկությունների հաշվեառ բոլորվին գոյությունը չունի:

Կերջին պաշտոնական տվյալների համաձայն Գերմանիայում գործազրկությունը թիվը հավասար ե 6,200 հազար մարդու, իսկ վորովհետև ապահովագրումից հանգած են նշանավոր չափով խավեր, ուստի միայն Գերմանիայում կարելի ե հաշվել մոտ 8 միլիոն գործազրկությունը: Միայնալ նահանգներում գործազրկությունը թիվը հասնում ե 14 միլիոնի, Անգլիայում գործազրկությունն անցել ե 3 միլիոնից, Յապոնիայում — մոտ 3 միլիոն ե և այլն:

Կրիզիսն իր ամբողջ ծանրությամբ փլվել ե քաղաքի աշխատավոր մասսաների վրա: Մի քանի յերկրներում գործազրկությունն ընդգրկում ե բանվոր դասակարգի կեսից ավելին: Միայն մի քանի յերկրներում գործազրկությունը ստանում են

փոքր նպաստներ, իսկ յերկրների ճնշող մեծամասնությունում նրանք վկայում չեն ստանում:

Յեկ յեթե այն փոնի վրա, ինչ կատարվում ե ամբողջ կապիտալիստական աշխարհում, վերցնենք Խորհրդային Միությունը, բանվոր դասակարգի գրությունը մեր յերկրում, յեթե վերցնենք այն ուրախալի փաստերը, վոր հաղորդվել են և Շվեյցարիա զեկուցման մեջ և վիճաբանություններում, յեթե համեմատենք այդ յերկու տարրեր, հակադիր ուղղություններով զարգացող սիստեմների գոյությունը. — այնտեղ՝ արդյունաբերության, գյուղական տնտեսության հսկայական անկում, աչտեղ՝ մեզ մոտ՝ արդյունաբերության ահագին թոհչք և կոլեկտիվացման արագ աճում, այնտեղ՝ հարված կենսական մակարդակին, այստեղ՝ կենսական մակարդակի վերելք, այնտեղ՝ սոցապահովագրման բոլոր հատկացումների անկում, այստեղ՝ սոցապահովագրման հսկայական աճում և այլն. — յեթե համեմատենք այս ամենը, ապա ամեն մի պրոետարիատի աչքին կզարնի յերկու սիստեմների սկզբունքային տարրերությունը, վորոնցից մեկը բերում ե քաղց, ազգատությունն, հիվանդություններ, պոռնկությունն, այլասերում և մահ կապիտալիստական ու գաղության յերկրների բանվոր դասակարգի համար, իսկ մյուսը բերում ե սոցիալիստական ստեղծագործությունն և աշխատանքի ուրախությունն, պրոլետարական դիկտուրայի յերկրի կուլտուրական ու նյութական բարեկեցության վերելք:

## ՊՐՈՖԻՆՏԵՐՆԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՄ ՄԼՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ. — ՏՆՏԵՍՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿՐԻԶԻՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Պրոֆինտերնի, նրա բոլոր սեկցիաների առանցքային հարցը յեղել ե կապիտալի հարձակմանը հականարկած կազմակերպելու հարցը, իսկ մյուս կողմից՝ այնտեղ, ուր այդ հնարավոր եղածապանությունից հականարձակման անցնելը:

Բայց ի՞նչպես անել այդ, ի՞նչպես հավաքել ուժերը, ի՞նչպես ամրացնել մեր շարքերը, վարդակին կառչել՝ իր հետեւ բանվորների բավականաչափ մասսաներ տանելու համար: Այն ողակը, վորից մենք բոնել ենք, — դա Տնտեսական մարտերի ին-

նուրույն դեկապարուբյունն է: Ակսած պրոֆմիությունների 8-րդ համագումարից, վոր տեղի ե ունեցել Պրոֆինտերնի |Վ կոնքրետից հետո, մեր սեկցիաների գործունելությունը գնացել ե այդ լուղունդի տակ: Բոլոր յերկրներում Պրոֆինտերնի սեկցիաները՝ փոքրերն ու մեծերը, շատ թե քիչ ուժեղները, ինքնուրուցն պրոֆմիությունները և ոեֆորմիստական պրոֆմիությունների մեջ յեղած-ոպազիցիան, —նրանք բոլորը պայքարել են անտեսական մարտերի ինքնուրույն դեկալարության համար՝ անես առելով յեկ առանց ոեթորմիստական առաջնորդների, ընդդեմ ոեթորմիստական ապարատի, վորն այդ ժամանակի ընթացքում կազմակերպել ե սիստեմատիկ շտրեյկբրեխերություն:

8-րդ համագումարից անցած ժամանակաշրջանը Պրոֆինտերնի սեկցիաների ձևակերպման ու ամրապնդման շրջան ե հանդիսանում՝ տնտեսական պայքարի ինքնուրույն դեկավարության հիման վրա: Մենք այժմ կարող ենք մատնանշել մի շարք յերկրներ, ուր չնայած կրիզիսին, չնայած գործազրկությանը, մենք հաջող պաշտպանություն ունենք, մինչև իսկ հաջող գործադրությին մարտեր, իսկ մի քանի գեպքերում ել աշխատավարձի բարձրացում՝ հարձակվող կապիտալի դեմ մղվող պայքարում: Այդ շրջանի գործադրությունը շարժումը մի շարք խիստ յուրահատուկ գծեր ունի:

Այդ ժամանակի ընթացքում կարելի ե մատնանշել մի շարք կարեռագույն գործադրուներ: Լեհաստանում անլեզալ կուսակցությունը և Պրոֆինտերնի անլեզալ սեկցիան դեկավարել են հանքագործների, մանածագործների և տրամվայշիների (առաջին և յերկրորդ գործադրուները) մի ամբողջ շարք գործադրուները: Գործադրուների մեծ մասը հաջող արդյունքներ ե տվել: Գործադրուների մի ամբողջ շարքը վոչ միայն յեկրոպական յերկրներում, այլև զալութային յերկրներում ցույց ե տալիս, վոր յուրաքանչյուր յելութեան ընդհարում ե բանվորներին բուրժուական պետության ամբողջ ապարատի հետ և միանգամբ սահման և դնում բանվորների ու պետության և ի դեմս ոեֆորմիստական կուսակցություններին նրա ազենտուրարայի ու ոեֆորմիստական պրոֆբյուլլատիալի միջև: Փորձը ցույց ե տվել, վոր յեթե Պրոֆինտերնի կողմանակիցները հաստատակամ կովում են և հմտորին միասնական ֆրոնտ են ստեղծում ներքեց, յեթե

նրանք իսկապես են գնում աշխատանքը մասսաների մեջ, նրանց հաջողլում ե մասսաներին պոկել ոեֆորմիստների ազդեցությունից և նրանց մարտի տանել:

Վորժնք են այդ շրջանի գործադրությային շարժման բնորոշ գծերը: 1) Կենսական մակարդակի համար մզվող պայքարի խորապես քաղաքական բնույթը: 2) Պրոֆինտերնի սեկցիաները գարձել են կարեռագույն ֆակտոր կապիտալի հարձակման դեմ մղվող պայքարում: 3) Ֆրոնտի առանձին տեղամասերում գործադուլային մարտերը փոխվում են հակահարձակման և հաջողություններ են տալիս: 4) Պրոֆինտերնը և կոմինտերնը հանդիսանում են միակ ուժը, վորը մասսաներին համախմբում է կապիտալի դեմ: 5) Մի ամբողջ շարք տեղամասերում մենք ունենք անտեսական մարտերի փոխանցում՝ քաղաքական գործադրուների և քաղաքական պայքարի:

Տնտեսական պայքարի հանրագումարը տալով՝ կարող ենք, արդյոք, մենք ասել, թե Պրոֆինտերնի սեկցիաներն արդեն իրոք կանգնած են իրենց խնդիրների բարձրության վրա, թե մենք իրոք իսկական, ֆրոնտի բոլոր տեղամասերում մարտ ենք տարել ինչպես պետք եր տանել: Կարող ենք, արդյոք, մենք ասել, թե մեր սեկցիաներն արել են այն ամենն, ինչ վոր նրանք կարող են անել տվյալ պարագաներում: Յես կարծում եմ, վոր ալգայս ասելը չափազանցություն կլիներ: Մենք ոկետք ե հաստատենք, —մի բան, վոր մենք արել ենք նաև Պրոֆինտերնի կենտրոնական խորհրդի վերջին՝ Vlll նստաշրջանում, —մեր սեկցիաների հետ մենալլ՝ մասսաների մարտունակութան համեմատությամբ: Այդ բանը մենք ասել ենք VIII նստաշրջանում, վորտեղ մենք բաց ենք արել մեր թուլությունների և սիսաների ամբողջ գումարը, ինքներս բոլշևիկորեն քննադատության ենք յենթարկել մեր ամբողջ գործունեյությունը և գծել ենք ուղիները հետագա պայքարի համար:

## ՊՐՈՖԻՆՏԵՐՆԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ ՄԼՎՈՒ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Իսկ ի՞նչ են արել Պրոֆինտերնի սեկցիաներն այն մոմենտից, յերբ առանձնապես պարզորեն յերկան և յեկել պատերազմի վեմ պայքարը չկըս-

թել բանվորների ամենուրյա պայխարից: Հավագույն որինակը, թե ինչպես պիտի պայքարել պատերազմի դեմ, հանդիսանում է հեղափոխական պլոֆիլությունների պայքարը Յապոնիայի կողմէ: Պրոֆինտերնի Վ կոնգրեսին յապոնական սեկցիան ուներ միայն 5,000 անդամ, VII նատաշրջանին՝ այսինքն 1931 թվի դեկտեմբերին՝ արդեն ուներ մոտ 15,000 անդամ: Իսկ պատերազմի դեմ մղած պայքարի մի քանի ամիսների ընթացքում,—չնայած վոր հաղարափոր մարդիկ ձերբակալված են, չնայած վոր ձերբակալվածներին տանջում են վոստիկանական դնդաններում,—Պրոֆինտերնի անլեգալ սեկցիան աճել է 35,000-ի (ծափահարություններ):

Յապոնական փոքրիկ կոմկուսը, յապոնական վոչ մեծ հեղափոխական պլոֆիլություններն առնականորեն պայքար են մղում պատերազմի դեմ (ծափահարություններ): Դեռևս մինչև պատերազմի սկիզբը նրանք ակտիվ պայքար են տանում պատերազմի դեմ: Այժմ ել նրանք իսկապես, բոլեհիկնորեն պայքարում են պատերազմի դեմ: Իսկ նա, ով բոլորիկորեն պայքարում է, կունենա նաև բոլշեիկան հաջողություն: Այդ բանը մենք փորձով գիտենք (ծափահարություններ):

Յապոնիայում արդեն լեղել են հարցուրավոր ցուցեր ընդդեմ պատերազմի՝ քաղաքներում ու գյուղերում:

Յապոնական ու չինական թերթերը հաղորդում են այն անհանգստության մասին, վոր կա և յապոնական նախատրմում, և յապոնական գորքերի մեջ: 1931 թվի վերջին՝ 1932 թվի առաջին ամիսները բավականաչափ աշխուժացել ե հակառատերազմական պայքարը և ահագին քանակությամբ ցույցեր են տեղի ունեցել քաղաքում ու գյուղում: Շարժումը պատերազմի դեմ ընդգրկել ե վոչ միայն բանվորների ու գյուղացիների մի մասն, այլ և ինտելիգենցիային: Այստեղից դաժան տեսող պրոետարական գրական, թատերական և այլ ինտելիգենտական կազմակերպությունների դեմ:

Պատերազմի դեմ ցույցեր ու գործադուլներ տեղի են ունեցել ինքուպական յերկներում և Ամերիկայում: Որինակ՝ բողոքի գործադուլը Դյունկիրխենում, մի քանի մասնակի գործադուլները՝ առաջական գենքերը բեռնելիս և թափելիս մի շարք յերկողական յերկներում և այլն:

Մենք ամենից քիչ ենք ուզում ասել, թե պատերազմի դեմ տարվող պայխարը բավականաչափ է: Նա բավական չե, նա դեռ նոր և ծավալվում:

Պրոֆինտերնը կովում է պատերազմի դեմ գործով և գործողություններով: Դրա մեջ ե կայանում մեր գծի ելությունը: Պատերազմի դեմ մղվող մեր պայխարը հիմնված է սասսաների հեղափոխական գործողությունների վրա: Պայքարը պատերազմի դեմ ամենից առաջ պետք ե կապված լինի պատերազմի իսկական աստանի մերկացման հետ: Յերբ 1922 թվին խորհրդային պատվիրակությունը մեկնեց Հայագայի խաղաղության միջազգային կոնքրեսը, լինինը մեզ հրահանգ տվեց, վորի մեջ չեղտեց, թե առանձնապես պետք ե պայքարել այն մաքի դեմ, վոր պայքարը պատերազմի դեմ—շատ հեշտ բան ե, Պետք ե, — սատնանշեցնա, — առանձնապես մերկացնել անդրկուլիսան բանակցությունների և պայմանագրերի ամբողջ աստանը՝ մասսաների առաջ բաց անելու համար այն խոհանոցը, վորտեղ իմպերիալիստական նոր պատերազմ և պատրաստվում: Ահա դա այն գիծն ե, վոր տանում են կոմինտերնն ու Պրոֆինտերնը՝ պատերազմի դեմ մղվող պայքարում: Պետք ե խոստովանել վոր այդ Փրոնտում Պրոֆինտերնի սեկցիաները հետ են մնան: Այդ բնակավառում հետ մնալը չափազանց վնասակար և չափազանց վտանգավոր եւ

Պատերազմի դեմ մղվող մեր պայքարում մենք պետք ե յելնենք նրանից, թե բանվոր դասակարգն—այն դասակարգն ե, վորն ամենամեծ զոհերն ե տալիս պատերազմին: Մենք պատերազմ չենք ցանկանում վոչ թե պացիֆիստական նկատառումներից, վոչ թե նրա համար, վոր մենք վախենում ենք արյունից, այլ նրա համար, վոր պատերազմը բոլոր յերկների աշխատավոր մասսաներին կարծենա սարսափելի զոհեր, վոր պատերազմը կիսանգարի այն յերկը սոցիալիստական շինարարությունը, վորտեղ պրոետարիատի ձեռքին և իշխանությունը: Մենք Խորհ. Միության բանվորներս—պատերազմի դեմ մղվող պայքարում պետք ե աշխարհիս բոլոր աշխատավորներից ամենապիշը լինենք: (Ծափահարություններ):

Պայքարը պատերազմի դեմ այժմ արդեն լայնորեն ծավալվում է: Նա ընդգրկում է բանվորների նորանոր խավեր, նա ներս և թափանցում գյուղը: Մասսաները վոչ մի պատերազմ

չեն ռւզում, իսկ պատերազմ ընդդեմ Խորհրդային Միության նրանք խորապես չեն ցանկանում: Ուստի մենք ունենք ահազին հնարավորություններ պայքարելու պատերազմի դեմ: Վճռական պայքարով կարելի է հեռացնել, հետաձգել պատերազմը, և դա արդեն մեծ շահում է: Պատերազմի դեմ մղվող պայքարի դրաւը մենք պետք ե մեր ձեռքում պահենք:

Կապիտալիստական յերկրներում մենք ի՞նչ լոգունգով ենք ընդառաջ գնում ապագա պատերազմին: Ի՞նչ լողունգով ենք մենք կազմակերպում մասսաները: Խմբերիալիստական պատերազմը բաղադաշխական պատերազմի վերածելու լոգունգով, զիսավոր բժնամին սեփական յերկրումն ե—լոգունգով:

## ԱՄՍՏԵՐԴԱՄՑԻՆԵՐԸ ԿՐԻԶԻՍԻ ՈՒ ՊԱՏԵՐԱՋՄԻ ՀԱՆԴԵՊ

Մեղ համար չափաղանց կարևոր ե լրջորեն տեսնել, թե կրիզիսի և պատերազմի հանդեպ ինչ դիրք ե բռնում բանվոր դաստիարգի իր սեփական շարքերում զինվոր թշնամին—միջազգային սոցիալ-դեմոկրատիան և նրա պրոֆմիութենական հրատարակությունը—Ամստերդամի ինտերնացիոնալը: Ամենից առաջ, կրիզիսը ջախջախել ե բոլոր սոցիալ-դեմոկրատական թեորիաները, ներառյալ «կազմակերպված կապիտալիզմի» թեորիան: Կրիզիսն ավերել ե այն հայացքների ու թեորիաների ամբողջ սիստեմը, վոր հիմնված են տիսրահոչակ «ծաղմկան» հիմքի վրա: Կրիզիսը մերկացրել ե կապիտալիզմի ներքին խոցերը: Սոցիալ-դեմոկրատիան ստիպված եր վորե ե կերպ ծայրը ծայրին հասցնել և վերջին տարիներս նա բռնել ե «պլանային տնտեսության» նոր թեորիայից:

Բայց, ինչ եք կարծում, ով պետք ե սոցիալ-դեմոկրատիայի կարծիքով կազմակերպի պլանային տնտեսությունը: Բանվոր դաստիարգը: Վոչ, «պետությունը»: Այն պետությունը, վորտեղ ապրում են այդ նույն սոցիալ-դեմոկրատները: Գերմանիայում—Հինդենբուրգն ու Բրյունինդը, Ֆրանսիայում—Տարդյեն, Անգլիայում—Մակդոնալդն ու Բոլդվինը և այլն: Մի խոսքով՝ նրանք այժմ խռում են կապիտալիստական պլանային տնտեսության մասին:

Ամստերդամի ինտերնացիոնալի և նրա սելցիաների, այս ինքն ամբողջ ուժորմիստական պրոֆշարժման բոլոր ծրագրերի քաղաքականության և տակտիկայի կապիտալիստական

գեմքն առանձնապես ցայտուն և հանդես գալիս կրիզիսի և պատերազմի հետ կապված բոլոր պրոբլեմներում: Հիմնականը, վոր այժմ քարոզում և խոսում են ամստերդամցիներն ամենուրեք, այն ե, թե չի կարելի պայքարել կրիզիսի ժամանակ բանվոր դաստիարգը պետք ե զոհեր տա: Բանվոր դաստիարգի կողմից դաստիարգը պետք ե զոհեր տա: Բանվոր դաստիարգի կողմից «զոհերի անհրաժեշտության» թեորիայով թափանցված են և Ամստերդամի ինտերնացիոնալների խոշորագույն սելցիաների կոնգրեսների վերջին տարվա բոլոր վարչությունները:

Ոեփորմիստների կապիտալիստական քաղաքականության մյուս հիմունքը հանդիսանում ե «փոքրագույն չարիք» տակտիկան: Այդ տակտիկայի ամենացայտուն որինակը հանդիսանում ե Գերմանիայի սոցիալ-դեմոկրատների և պլոփրյուրոկրատների տակտիկան: Հինդենբուրգին—«ավելի փոքր չարիք ե», քան թե Հիտլերը. Հիտլերը Բրյունինդի հետ միասին—«ավելի փոքր չարիք ե», քան թե մենակ Հիտլերը. աշխատավարձն իշեցնելու մասին կամավոր համաձայնությունն «ավելի փոքր չարիք ե», համեմատած տանուլ տված գործադուլի հետ. նպաստները կրամատելու շնորհիվ բանվորների քաղցն ու մահացումը «ավելի փոքր չարիք ե», քան թե կապիտալիստական բանկերի, ձեռնարկների և այլն սնանկացումը:

«Ավելի փոքր չարիք» տակտիկան ոգտագործվել ե նրա համար, վորպեսզի մասսաներին կոչեն ձախ տալու Հինդենբուրգին: «Ավելի փոքր չարիք» լոգունդի տակ նրանք ձայն են տալիս սոցիալական ապահովագրման ծախսերը կճատելուն: «Ավելի փոքր չարիք» լոգունդի տակ նրանք խանգարում են բանվորական գործադուները: Այդ լոգունդի տակ բանվորական մասսաներին վախեցնելով, թե Փախանական իշխանությունը կվերցնեն, նրանք նախապատրաստում են մասսաներին ընդունելու բացարձակ լավիրշ Փաշիստական դիկտատուրան, յեթե նա լու բացարձակ ալիսն պահպանով, ալիսն պահպանով վորոշ առյերեւոյթ դեմոկրատական ձևերը:

Սակայն մենք, ընկերներ, նրանց կողմից ունենք վոչ միայն լերկամարմին շարելկբեխերության տակտիկա, մենք նըրանց մոտ տեսնում ենք նաև «ձախ» մասեվրներ: Այն գեղքերում, յերբ ամստերդամցիները վոչ մի կերպ չեն կարողանում

մասսալի հախից գալ նրանք գլխավորում են շարժումը՝ Ահա, որինակ, լէճ. Սոց. կուսակցությունը վերջերս բողոքի միրյա գործադուլի կոչ և արել։ Անցյալ տարի ֆրանսիայում ռեփորմիստները ղեկավարել են մանածագործների մեծ գործադուլը։ Այդ մաներները նպատակ ունին մասսաներին պահել ռեփորմիստական կազմակերպությունների ազգեցության տակ և վորոշ մոմենտում խախտել շարժումը բոլոր յերկրներում։

Սացիալ-դեմոկրատները պնդում են, թե գեռես պատերազմ չկա, թե Հեռավոր Արևելքի պատերազմը—դա պատերազմ չեւ Նրանք այժմ հանդես են գալիս հայտարարելով, թե կրիզիսը բարենպաստ չեւ սոցիալիստական քաղաքականության համար (Վանդերվելի), թե Հեռավոր Արևելքում թյուրիմացություններ կան, թե Յապոնիան պետք եւ եքսպանսիալի վորոշ հնարավորություն ստանա, թե նա այլապես չի կարող գոյություն ունեալ և այլն։

Ամստերդամիների դեպի պատերազմն ունեցած այդպիսի վերաբերմունքի ցայտուն որինակն և հանդիսանում յապոնական սոցիալ-դեմոկրատների վարչը։ Ամնից առաջ, յապոնական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության նախագահ Ա.ԲԵ.-Ն վերջերս հայտարարել ե, թե «մենք միավետության ազնիվ կողմնակիցներ ենք»։ Միապետությունն առնառարակ մեծ դեր ե խաղաղում Յապոնիայում և, իզուր չե, վոր վերջերս վոստիկանությունը ստեղծել և հատուկ կուսակցություն, վորը հետեւալ լողունքն ե դրել «պրոլետարիատի դիկտուրա միկադոյի գլխավորությամբ» (Ծիծաղ)։ Այդ կազմակերպությունը, վորը ստեղծված ե յապ նական վոստիկանության կողմից, թուոցիկներ և բաց թողյով ցանկանալով ոգտագործել կոմունիստների հեղինակությունն ու պրեստիժը։ Իսկ յեթե մինչև իսկ մի կողմ թողնենք այդ պրովոկատուրներին ու վոստիկանական ագենտներին ու վերցնենք սոցիալ-դեմոկրատներին իրենց զուտ բնական, նատուրալ ձևով, ապա անա թե ինչ և ստացվում։ Վերջերս Մանջուրիայի բռնագրավման առիթով հանդես ե յեկել Ֆրիմենի գլխավորած տրանսպորտնիկների միջազգային ֆեդերացիային հարող ծովագների միության նախագահը։ Նրա ճառը հանդիսանում է յապոնական այնպիսի գեղեցիկ գրականության որինակ, վոր

Յնայած նրա յերկարությանը, յես այնուամենայնիվ ձեզ համար կկարդամ։ Նրա մեջ զուգակցվում են յապոնական իմպերիալիզմի նուրբ նշխուն վոճն ու միանգամայն բացառիկ սոցիալ-ֆաշիստական ցինիզմը։ Ահա թե ինչ և ասում ծովագնացների միության նախագահ ինամաղան։

«Ինչ վերաբերում ե մանջուրա-մոնղոլական հարցին, ապա այստեղ սպասվում են մեծ բարդություններ շնորհիվ Չինաստանի կողմից հանգես բերվող տղիտությանն ու համառությանը (!)։ Չախ տարրերը խոսում են այն մասին, վոր մեր յերկրի շահերը Մանջուրիայում և Մոնղոլիայում հետևանք են իմպերիալիստական բռնագրավման և թե պետք ե անհապաղ հրաժարվել նրանցից։

Սակայն, ի՞նչ ոգուտ կատանա չին ժողովուրդը, յեթե Յապոնիան հրաժարվի Մանջուրիայում և Մոնղոլիայում ուն եցած իր շահերից։ Յեթե Յապոնիան հրաժարվեր Մանջուրիայում և Մոնղոլիայում ունեցած իր շահերից, դա կնշանակեր տեղական ուազմական կլիկի կողմից շահագործման ուժեղացումը և դրանով կապահովի Անգլիայի, Ամերիկայի և Ռուսաստանի գրավողական հարձակումը Հեռավոր Արևելքում։

Այն բանը, վոր մեր յերկիրը, վորն ունի փոքր տերիտորիա և աղքատ և ընական հարստություններով, ըստ վորում տառապում և գերբնակչությամբ, տնտեսական հարձակում և մղում Մանջուրիայի և Մոնղոլիայի վրա, վորոնք ահագին տերիտորիա ու աննշան բնակչություն և ահագին բնական հարստություններ ունին, —այն բանը, վոր մեր յերկիրն ուզում ե մշակել այդ ահագին բնական հարստությունները՝ Յապոնիայի և Չինաստանի փոխադարձ աշխատակցությամբ, —ահագին ոգուտ և վոչ միայն մեր յերկիր, այլև չինական յերկիր համար։ (Ծիծաղ)։ Յեթե յենենք սոցիալիզմի տեսակետից (Ծիծաղ), ապա մեր յերկիրը, վոր ունի 100 միլիոն բնակչություն հողի աննշան կտորի վրա և ստիպված ե ծայր աստիճան սեղմվել, չի կարելի չանվանել միջազգային պրոլետարական պետություն (Ծիծաղ)։ Դրա հակառակ Չինաստանը, վորն ունի ահագին տերիտորիա և համեմատաբար նոսր բնակչություն, հանդիսանում ե միջազգացին բուրժուական պետություն (Ծիծաղ)։

Միջաղգային հավասարություն և խաղաղություն սահմանելու համար, վոր մեր միակ իդեալն և հանդիսանում, պետք է ակտիվ կերպով պաշտպանել Մանջուրիայի և Մոնղոլիայի վերաբերմամբ յապոնական պլանների իրագործումը»:

Ինչ կարելի ե ասել, ընկերներ, Ամստերդամի հնտերնացիոնալի այդ սեկցիայի այդպիսի յիշույթի առիթով:

Մենք լիակատար իրավունք ունենք ասելու, վոր և Ամստերդամի հնտերնացիոնալները պացիֆիստական ֆրազեռլողիայով քողարկում են իրենց բուժուազիայի հակախորհրդային թալանչիական աշխատանքը: (Զայն—նիւս է):

Ով և նախապատրաստում բանվորական մասսաներին պատերազմի՝ ընդդեմ Խորհրդային Միության: Ով և ստերի կամպանիան տանում մեր յերկրում «ստրկական աշխատանք» լինելու մասին: Ով և ամեն որ մամուլում զրպարտություններ զետեղում մեր յերկրի բանվոր դասակարգի դեմ: Յեթե վերցնենք սոցիալ-գենուլրատական մամուլը, վերցնենք այն, ինչ վոր ամեն որ գրում են «Փորվերտու», ֆրանսիական «Պոպյուլերը» կամ բելգիական «Գեյլը», ապա մենք այնտեղ կտեսնենք ամենազգվելի հարձակումներ Խորհ. Միության դեմ:

Սպիտակ-գվարդեցչինայի բոլոր հերյուրանքները տեղ են դտնում սոցիալիստական մամուլում: Ինչու: Նրա համար, վորպեսզի աշխատեն ցույց տալ բանվորներին, թե պրոլետարական դիկտատուրայի յերկրում ավելի վատ և, քան թե այժմ իրենց մոտ ե, նրա համար, վոր մասսաներին հոգեբանորեն պատրաստեն պատերազմի համար, նրա համար, վոր ցույց տան բանվորներին, թե Խորհ. Միությունը ցանկանում և հարձակվել իրենց «թանկակին հայրենիքի» վրա:

Ահա թե ինչու մենք պետք ե վճռական պալքար մղենք սոցիալ-գենուլրատական սուտ, նողկալի պացիֆիզմի դեմ—այդ ծխաքողի դեմ, վորը քողարկում ե դավերի միանգամայն պարզ գիծը՝ պրոլետարական յերկրի դիկտատուրայի դեմ:

## ՊԱՏԷԱՐ ԼԵՆԻՆՑԱՆ ԳԾԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԱՓՈԽՎԿԱՆ ՊՐՈԴՍԱՐԺՄԱՆ ՄԵԶ

Պրաֆինտերնի սեկցիաներն իրենց ամենորյա պալքարում ձեռնարկում՝ գործադուների և կոնֆլիկտների ժամանակ՝ կոիվ

մն մզում բոլոր տեսակի ու գույնի սոցիալ-դեմոկրատների և պրոֆիրուրոկրատների դեմ: Դա Պրոֆինտերնի ու նրա սեկցիաների առաջ կանգնած կարևորագույն խնդիրներից մեկն ե:

Պրոֆշարժման մեջ լենինյան գծի համար մղվող պալքարը յենթադրում ե վոչ միայն պայքար սոցիալ-դեմոկրատների դեմ, այլ և պայքար բոլոր սոցիալ-դեմոկրատական մացորդների դեմ հեղափոխական պրոֆշարժման շարքերում:

Ինչի մեջ ե կայանում աջ քեմիան իդեոլոգիան՝ հեղափոխական պրոֆշարժման մեջ: Միասնական ֆրոնտն այնպես հասկանալու մեջ, թե դա միասնություն ե պրոֆրյուրոկրատների հետ, պրոֆմիութենական—ունիորմիստական ապարատի առաջ խոնարհվելու մեջ, տնտեսական մարտերն ինքնուրուցն կերպով դեկավարելուց հրաժարվելու մեջ, մեր հեղափոխական տակտիկան ունիորմիստական պրոֆմիությունների—այսինքն սոցիալ-դամոկրատական պրոֆմիությունների—ստատուներին, սովորույթներին և քաղաքականությանը հարմարացնելու մեջ: Աջ-ոպորտունիստների դեմ մղած պալքարում ամբապնդվել ե հեղափոխական պրոֆշարժմանը:

Մենք այդ ժամանակի ընթացքում շատ բան ենք արել Պրոֆինտերնի սեկցիաների քաղաքական առողջացման և մեր բոլոր կազմակերպություններում աջ-ոպորտունիստական թեքման ու նրա խմբավորներումների ավելի արագ լիկվիդացիայի տեսակետից: Այդ ժամանակի ընթացքում մենք ջախջախել ենք աջ-ոպորտունիստական խմբավորումները գերմանական հեղափոխական պրոֆշարժման մեջ: Մենք ջախջախել ենք աջ-ոպորտունիստական խմբավորումները Միացյալ Նահանգներում, Զեխովուլովակիայում, Ֆրանսիայում, մերկացրել ենք նրանց մի շարք յերկրներում և այն, վոր մենք արել ենք արագ ու հեշտ՝ Խորհրդային պրոֆշարժման ծառայությունն ե, վորը ջախջախել ե Համամիութենական կենտրոնական Պրաֆինտերնի աջ-ոպորտունիստական դեկավարությունը: (Ծափահարություններ): Յեկ յեթե մեր կուսակցություններն Արևմտյան Յեվրոպայում ու Ամերիկայում կարողացել են լիկվիդացիայի յենթարկել աջ-ոպորտունիստական խմբակներն ու քրակցիաները, ապա դա ՎենԱՊԵ-ի (Բ) ծառայությունն ե, վորը միանգամայն ջախջախել ե աջերին մեր շարքերում: (Ծափահարություններ):

Բոլոր յերկրներում աջերի դեմ մղած պայքարը զուգընթացաբար և միաժամանակ ե գնացել մի շարք յերկրներում «ձախ» դրույթների դեմ մղած պայքարի հետ, չինական կոմկուսում և չինական պրոֆմիություններում յեղած «ձախ» թեքման դեմ: Չինական կոմկուսի քաղբյուրոն՝ լի լի սահնի զեկավարությամբ այսուեղ և համել «թե պրոֆմիությունները հարկավոր չեն հեղափոխական վերելքի ժամանակի»: Պրոֆմիությունները մեկի դաշտավայրի յենթարկելու փոխարեն մենք լիկվիդացիայի ենք յենթարկել լիլիսանովշչինան և հաջողեցրել ենք անհրաժեշտ շրջադր գեղի մասսաները, վորոնք շատ խիստ հարկավոր են ջիստասահնի մեր անկեցալ և մարտական կոմկուսի համար: Մենք այդ ժամանակում Գերմանիայում պայքար ենք մղել «ձախ» դրույթների դեմ, վոր իրենց արտացոլումն են գտել Մերկերի հայցըներում:

Յեթե վերցնենք «ձախ» դրույթների ամբողջությունը, ապա ինչին են հանգում նրանք: Մեր և սոցիալ-դեմոկրատական բանվորների անձիւտ փոխարարելություններին, լիդերներին և ռեփորմիստ բանվորներին մի կույտի մեջ խառնելուն, ռեփորմիստական և այլ սեակցիոն պրոֆմիություններում՝ աշխատելուց հրաժարվելուն:

Միջազգային պրոֆշարժման մեջ լենինյան տակտիկայի համար մղվող պայքարը մենք չենք դադարեցրել և չենք դադարեցնում: Այդ պայքարն ընդդեմ ազ քեման, վորը զիսավոր վտանգըն ե նախդիսանում մեր շարերում, ընդդեմ աղանդավորական դրույթների այսուհետեւ ել շարունակվելու և պահաջափ կերպով: Մեր աշխատանքի փորձը հրամայողաբար առաջ ե քաշել թեորիտական և քաղաքական հատուկ կայունության խնդիրը՝ մեր շարքերում յեղած ռեփորմիստական և անարխո-սինդիկալիստական թեքումների դեմ մղվող պայքարում:

Մանր-բուրժուական թեքումների և լենինիզմից արվող շեղումների դեմ մղվող պայքարում թեորիական կայունության անհրաժեշտությունը շեշտված ե, ինչպես գիտենք, ընկ. Ստալինի հայտնի նամակում, ու մենք՝ լինելով բոլշևիկներ և վոչ թե տրեգ-յունիոնիստներ՝ կարծում ենք, վոր դա վերաբերում ե նաև միջազգային պրոֆշարժմանն ու առանձնապես ուշադիր աշխատանք և պահանջում՝ մեր կաղըերի թեորետիկ ու

քաղաքական դաստիարակության վերաբերմամբ, առանձնապես ուշադիր և համառ պայքար՝ միջազգային պրոֆշարժման մեջ լենինյան գծից ծռվելու դեմ:

Յեթե վերցնենք ամբողջ համաշխարհային պրոֆշարժումը, ապա Պրոֆինիսերնի 62 սեկցիաները, վորոնք գոյություն ունին և պայքարում են աշխարհի ամբողջ տարածության վրա զանազան պայմաններում ու զանազան պարագաներում՝ կապիտալիզմի անհամաչափ զարգացման և հեղափոխական պրոցեսի չափազանց անհամաչափ զարգացման հիման վրա,—միատեսակ չեն իրենց քաղաքական ու կազմակերպչական մակարդակով: Մենք պետք ե մատնանշենք այս տարիների ընթացքում մեր սեկցիաների աճումը Գերմանիայում, լեհաստանում, Յապոնիայում, Չինա-Սլովակիայում, ՀԱՄՆ-ում և մի ամբողջ շարք այլ յերկրներում: Մի քանի սեկցիաներում, ինչպես որինակ, փրանսիականում, մենք մինչև 1931 թվի վերջը ունեինք անդամների թվի անկում, ապա վորոշ կայունացում, իսկ այժմ անդամակցական կազմի դանդաղ աճման սկզբ:

Ինչն ե ամենից բնորոշն ու եյականը մեր բոլորը սեկցիաների աշխատանքում և ինչի վրա ենք մենք ուշադրություն դարձնում:

Մենք պետք ե մատնանշենք, վոր մեր սեկցիաները դեռևս բավականաչափ չեն բափանցել ձեռնարկեները, նրանք՝ առանձին բացառություններով՝ գեռևս չեն վերակառուցվել ըստ արտադրական սկզբունքի: Մի խոսքով՝ նրանք դեռևս իսկական բոլ-ժելիլյան պրոֆմիուրենական բաղադականությունն չեն տանում:

Ինչ ե հարկավոր մեղ: Մեզ խորապես հարկավոր ե աշխատել նոր ձեռփակ, բոլցեվիլիկունեն:

Բոլցեվիլի ուժը միշտ կայացել ե նրանում, վոր նա որգանապես կապել ե քաղաքականությունը կազմակերպման հետ և տարել ե բոլցեվիլյան կազմակերպչական քաղաքականություն: Յեզ այդ քանը մենք, վորպես խորհրդապային պատվիրակություն, վորպես չամացմիութենական կենտրոն. Պրոֆխորհրի պատվիրակություն, աշխատում ենք կենսագործել մեր սեկցիաներում:

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՎԵՐԵԼՔՆ ԱՆՀԱՄԱՉԱՓ Ե, ԲԱՅՑ ՌԻՌԱՋԱՆՈՒՄ Ե

Համաշխարհային տնտեսական կրիզիսի և Հեռավոր Արևել-քում տեղի ունեցնելով պատերազմի պայմաններում ծավալը լուծ է հեղափոխական վերելքը, վորն ունի անհամաշագի, վոչ միանման բնույթ, վորովհետեւ նա վորոշվում է ամեն մի յերկրի առանձին պայմաններով:

Սկսենք Զինաստանից, ուր հեղափոխական վերելքն ունի այն յուրորինակ դիմում, վոր նա հենվում է զինված ուժի, բանակի վրա: Ֆեոդալական Զինաստանը, ագրարային, աղքատացած, և իմաստակալիստների, և գեներալների, և կալվածատերերի կողմից շահագործվող Զինաստանն այժմ գտնվում է չափազանց յուրորինակ դրության մեջ: Հեղափոխությունը գալիս է Զինաստանի ագրարային խորքերից գեպի արդյունաբերական կենտրոնները:

Սակայն ազգարարին ույյունների հեղափոխական խորհրդային շարժման հետ միաժամանակ՝ մենք այժմ տեսնում ենք նաև բանվորական շարժման անկասկած մեծ վերելք այնպիսի կենտրոններում, վորպեսին են Շանհայը, Խանկոուն, Տյանցզինը և այլն: Այդ վերելքն առանձնապես ձևակերպվել է բանագրավման ժամանակ, Շանհայի շուրջը տեղի ունեցած պայքարի ժամանակ: Յապոնացիների դեմ կռվող հիմնական ուժը յեղել էն վոչ միայն 16-րդ բանակի զինվորները, այլև այդ խոշորագույն պրոլետական կենտրոնի բանվոր բնակչությունը:

Յեթե վերցնենք Զինաստանի բանվորական շարժման զարգացումն այդ ժամանակում, ապա շատ հետաքրքիր պատկեր կատացվի: Միայն 1931 թվի ընթացքում, միայն Շանհայի ույյունում գործադուլ ե արել 700,000 բանվորներից ավելի, իսկ յեթե վերցնենք Շանհայի և Տյանցզինի ույյունները, ապա միայն թվին այստեղ գործադուլ ե արել 1,100,000 բանվոր:

Դրության գնահատականը տալով պետք է ասել, վոր Զինաստանում հեղափոխական վերելքը հասել է ամենաբարձր կետին, վորովհետեւ ստեղծել է պետական իշխանություն խորհրդանության համար և նա արդեն հենվում է կարմիր բանակի վրա, այնտեղ խորհրդաների լոգունգի տակ տեղի է ունենում քաղաքա-

ցիական պատերազմ վոչ միայն Գոմինդանի ռեակցիայի դեմ, այլ և իմպերիալիստների դեմ:

Հետեւալ յերկիրը, վորտեղ մենք ունենք հեղափոխական վերելքի մեծ թուիչը և թափ, դա Սպանիան է, ուր ձեւականորեն անցյալ տարվա ազրիլից սկսվում է բուրժուական հեղափոխության ծավալումը: Այդ ժամանակի ընթացքում անարխիստներն ու ռեֆորմիստները միասին դուրս են գալիս հեղափոխության խորացման դեմ:

Սպանիան այն յերկրներից մեկն է, ուր անարխիզմը մեծ տրագիդիան է ու մեծ ազգեցություն ունի, և հենց Սպանիայում առանձին պարզությամբ յերկան է գալիս անարխիզմի ու անարխո-սինդիկալիզմի հականեղափոխական դերը, վորոնք հրաժարվում են քաղաքականությունից՝ զուտ եկոնոմիկայի դրոշի տակ՝ և խախում են Սպանիայի բանվոր դասակարգի պայքարը: Հեղափոխության սկզբին Սպանիայի կոմկուլը շատ փոքր է յեղել: Պրոֆինտերնի սպանական սեկցիան ել է փոքր յեղել և ունեցել ե միայն մի քանի հազար հոգի: Այս տարվա ընթացքում կուսակցությունն իր շարքերը մեծացրել ե և հասցը 11,000 հոգու: Մեր սեկցիան աճել, հասել է 160,000 հոգու: Այդ ժամանակի ընթացքում Սպանիայում մղված անագին գործադուլային պայքարը, Անդալուզիայի, Բիլբաոյի, Բարցելոնի և Սպանիայի մյուս ույյունների ահազին գործադուլները աչքի ընկնող մասը զեկավարել են Պրոֆինտերնի կողմնակիցները, թեմայը յելույթների մեծամասնությունը դեռևս կատարվում է անարխիստների զեկավարությամբ:

Սպանիայում հեղափոխական պայքարը գնում է խորհուրդների և բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջ տանելու լողունգով: Ներկա պարագաներում բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մինչև վերջ տանելը նշանակում է բուրժուական-դեմոկրատական հեղափոխության արագ գերաճում սոցիալիստական հեղափոխության:

Հետեւալ յերկիրը, վորն ունի անցքերի խիստ յուրորինակ ծավալում, դա Հնդկաստան է: Այս, ինչ կատարվում է Հնդկաստանում վերջին տարիներս, մանավանդ 1928 թվից՝ սկսած միջազգային-համաշխարհային նշանակություն ունի: Մենք այստեղ ունենք կոմունիստական կուսակցության ձևակերպում, հեղա-

փոխական պլրոֆշարժման ձևակերպում։ Մենք այստեղ ունենք գործադուլային շարժման ահագին թափ, վոր 1928 թվի ընդուր-կել և 500,000 բանվորից ավելի, 1931 թվին գործադուլ և արել 200,000 բանվորից ավելի, բայց դրա փոխարեն գործադուլային շարժումը տարածվում և ամբողջ Հնդկաստանուա, ընդգրկելով ամենահետամնաց ռայոնները։

Հնդկաստանի համար հիմնականն այն ե, վոր այդ պայքառում բանվորը դառնում է բրիտանական իմպերիալիզմի և աղդային բուրժուազիայի դեմ տարվող կովկի հեղեմոնը։ Նա հանդիսանում է միակ հետեղական հակա-միլիտարիստական ուժը։ Հիմնականն այն ե, վոր այդ պայքարում տեղի է ունենում պրոլետարիատի ազատվելը բուրժուազիայի ազդեցությունից, Ազգային կոնգրեսի, աշ և ձախ նացիոնալիստաների՝ ազդեցությունից։ Այնուամենայնիվ գեռես բանվորների աշքի ընկնող խավերը գնում են Ազգային կոնգրեսի հետևից, բայց Հնդկաստանում արդեն ձևակերպված են կազմակերպություններ, վորոնք հանդես են գալիս պարզ լողունգներով, պարզ դիրքով։ Այդ կազմակերպությունների հետեւ գնում են ավելի ու ավելի մեծ քանակությամբ բանվորներ։

Հետևյալ լեռկրները, վորտեղ կա հեղափոխական պրոցեսի հասունացման բարձր աստիճան, — դա լինածանն ու Գերմանիան. Են:

Յեթև վերցնենք Լեհաստանի տնտեսական ու քաղաքական գրությունը, ապա մենք կտեսնենք, վոր վճռողականորեն բոլոր կողմերից նա իրենց ներկայացնում է նեղավոխուրյան նախորյակի յերկիր։ Հեղափոխության մոտեցման մասին այժմ լեհաստանում արգեն խոսում են բացեիբաց։ Դասակարգային մարտերն այնտեղ բռնկվում են յերկրի բոլոր մասերում։ Գործադրություն հատեից և տեղի ունենում։

Շատ լուրզինակ ե զրությունը Գերմանիայում, վորտեղ  
մենք ուժերի բևեռացում ունենք՝ ֆաշիզմի աճումը, վորպես այդ  
մասին վկայում են վերջին ընտրությունների արդյունքները, և  
մյուս կողմից—բանվորական մասսաների մեջ անբավականու-  
թյան, ատելության այնպիսի կուտակում, վորպեսզին չկա վոչ  
մի ուրիշ յերկրում:

Մեր կողմանկիցների, — վորոնք Գերմանիայում վերջին ժամանակներս աճել են, — հիմնական խնդիրն ե պայթեցնել ուս- ֆորմիստական պրոֆմությունների զիսցիպլինան, բաժանել խմել բանվորներին ոեֆորմիստական ազգեցություննեց:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե — ՆՎԱԶԵԼ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԿԱՐ-  
ԳԻ ՄԵԴԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆ ՊԱՅՖԱՐԻ ՏԱ-  
ՆԵԼ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր յերկրներում Պրոֆինտերնի հիմնական խնդիրն ե—  
բանվոր դասակարգի մեծամասնության նվաճումը: Մի քանի յեր-  
կրներում Պրոֆինտերնի սեկցիաները դրան ավելի են մոտեցել  
մյուսներում պակաս, բայց համեմատն գեղազ' բանվոր դասակարգի  
մեծամասնության նվաճումը այն հիմնական սրատեզական խրն-  
դիրն է, վոր կանգնած է Պրոֆինտերնի առաջ: Նրա բոլոր քա-  
ղաքական, տակտիկական և կազմակերպչական լոգունգներն իրենց  
խնդիրը ունին՝ հասնել այդ հիմնական ստրատեզական նպա-  
տակին:

ի՞նչ ենք մենք արել մինչև այժմ՝ Մենք կոմինտերնի հետ  
միասին արգեն կարողացել ենք կոտրել այն մենաշնորհը, վոր  
սոցիալ-դեմոկրատիան ուներ բանվորական շարժման մեջ։ Միջ-  
ազգային սոցիալ-դեմոկրատիան արդեն մոնոպոլիստ չե բանվո-  
րական շարժման մեջ։ Կոմունիզմն աճում է, նա զրջում է  
ամբողջ աշխարհում, նա ներս է թափանցել կապիտալիստական  
պետությունների գործարաններն ու ֆաբրիկները, կալվածատե-  
րական դաշտերը, գաղութային պլանտացիաները, նա ներս է  
թափանցել շախտերն ու հանքահորերը, զորանոցներն ու նավա-  
տորմը։ Զեա այն ուժը, վորը կարողանար խեղդել հարյուր միլիո-  
նավոր գաղութային ստրուկների ապստամբությունը և կոմունիզմի  
հաղթական լերթը։ Զեա այն ուժը, վորը կարողանար կանգնե-  
ցնել Խորհ. Միության աճումը և զարգացումը ու նախկին ցա-  
րական Ռուսաստանի տերիտորիայում անդասակարգ հասարա-  
կության ստեղծելը։ Զեա այն ուժը, վորը կարողանար պրոլե-  
տարական հեղափոխության առաջն առնել։ Ցեզ մեր խնդիրը,  
Պրոֆինտերնի, նրա սեկցիաների և կողմանակիցների խնդիրը կա-  
յանում է նրանում, վորպեսզի արագացնի այդ պատմական պրո-

ցեսը, վորքան կարելի ե արագորեն նվաճվի բանվոր դասակարգի մեծամասնությունը և կոմինտերնի գրոշի տակ՝ ներկա համաշխարհային անտեսական կրիպտոս դարձվի կապիտալիզմի վերջին կրիպտո:

Արդյոք, այս կրիզիսը վերջինն եւ Դա կախված ե սուբյեկտիվ Փակտորից, այսինքն Կոմինտերի և Պրոֆինտերնի սեկցիաներից, վոր զինլում են կապիտալիստական և գաղութային յերկրներում:

Քաղաքական ու կազմակերպչական բոլոր ուժերը, վոր ունի Պրոֆմիությունների կարմիր խնտերնացիոնալը, ամբողջ աշխարհի աշխատավորների համակրանքը դեպի Խորհ. Միությունը—այդ ամենը իմպերիալիստական նոր պատերազմի կազմակերպիչների ու նախաձեռնողների դեմ կրիստ:

Մենք, ընկերներ, պայքարում ենք պատերազմի դեմ։ Մենք  
ամեն ինչ կանենք, վորպեսզի իմպերիալիստական նոր պատե-  
րազմի վրա հասնելը հեռացնենք։ Սակայն յեթե նա պայթի, —  
իսկ նա արդեն սկսվել է Հեռավոր Արեվելքում, — յեթե պատե-  
րազմն ընդգրկի նոր յերկրներ ու պետություններ և ժողովուրդ-  
ներին մեկը մյուսի դեմ հանի, դուք կարող եք հավատացած լի-  
նել, վոր ձեր շարքերում ու ձեզ հետ միասին, բոլոր յերկրների  
առաջավոր բանվորները՝ Կոմինտերնի և Պրոֆինտերնի ղեկավա-  
րությամբ՝ ամբողջ աշխարհում պատերազմի դեմ պայքար կտա-  
նեն և կհասցնեն այն մինչև վերջ, պայքար կապիտալիզմի դեմ,  
պայքար պրոլետարիատի դիկտուրայի համար, պայքար կո-  
մունիզմի համար։ (Մաքահարաւրլունելու)։

ՊՐՈՓՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԻՈՒԹԵ-  
ՆԱԿԱՆ IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՉԵՎԸ  
ՊՐՈՓՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԻՈՒԹԵ-  
ՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇ-  
ՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՆ

Պրոֆմիությունների Համամիութենական Կենտրոնական  
Խորհուրդի աշխատանքի մասին ընկ. Շվերնիկի հաշվետու զեկու-  
ցումը լսելով՝ պրոֆմիությունների IX համագումարը ճիշտ և  
համարում Պրոֆ. Համ. Կենտր. Խորհրդի տարած քաղաքական  
գիծը և ամբողջովին ու լիովին հավանություն և տալիս նրա  
գործնական աշխատանքին, վոր ուղղված և դեպի Պրոֆ. Համ.  
Կենտր. Խորհրդի հին, քաղաքականապես սնանկայած աջ ոպոր-  
տունիստական դեկավարության մեացորդները վերջնականապես  
արմատախիլ անելու և ՎԵԿԱ.ՊԵ.Ի (բ) հիմնական գիծն իրակա-  
նացնելու:

IX համագումարը գտնում ե, վոր իր բոլցիկան կուսակցության և նրա կենտկոմի ղեկավարությամբ՝ Խորհրդային Միության—իր նշող մեծամասնությամբ—պրոֆմիություններում կազմակերպված պրոլետարիատը խոշորագույն նվաճումներ եռեցել սոցիալիզմի համար մղվող պատքարում և հնգամյա պլանը հաջողությամբ կատարում ե տարրում:

Збєркірі ինդուստրիացման, ծանր արդյունաբերությունը բարձրացնելու, արտադրության միջոցների արտադրությունը (մետաղի, մեքենաշինման, քարածուխի և նսվթի) ծալվակելու համար անշեղ կերպով տարվող քաղաքականության հիմունքով՝ սեփական բազա և ստեղծված ամբողջ ժողովրդական տնտեսության բեկոնստրուկցիան ավարտելու համար։ Անցած ժամանակամիջոցում լուծված «պրոլետարական հեղափոխության ամենադժվարին, ամենահակարևոր խնդիրը»—գյուղացիական չքավոր-

միջակ մասսաները վերջնականապես շուռ են յեկել դեպի՝ սոցիալիզմ: Սովորողների և ՄՏԿ-երի շինարարությունը, համատարած կոլեկտիվացման ծավալումն ու դրա հիման վրա կուլակի, վորպես դասակարգի վերացումը, մեքենայական տեխնիկայի լայն կիրառումը Խորհրդային Միությունը դարձրել են «մանրիկ ու մանրագույն հողագործական յերկրից—աշխարհիս վրայի ամենախոշոր հողագործության յերկիր» (ՎեհԱՊԵ-ի (բ) XVII կոնֆերանս):

Բանվորների և ծառայողների թիվը 1928 թվին յեղած 11 միլ. 552 հազարից՝ 1931 թվին հասել և 18 միլ. 590 հազարի: Նույն ժամանակամիջուռում պրոֆմիությունների անդամների թիվըն ավելացել է 5½ միլիոնով:

Սոցիալիստական տնտեսության աճումը բարելավել և բանվորական մասսաների նյութական դրությունը և կուլտուր-կենցաղային պայմանները:

Յերկրում գործազրկությունը լիովին վերացված և և արդյունաբերական բանվորների ճնշող մեծամասնությունը (85%) շ-ժամյա բանվորական որվա և փոխանցված: Ամբողջ ժողովը դական տնտեսության տված տարեկան միջին աշխատավարձը 1928 թիվը մինչև 1931 թ. աճել է 56,8%, իսկ 1932 թվին այդ աճումը նշված է 71,2%—1928 թվի համեմատությամբ: Յերեք տարում բնակարան և կառուցված 3 միլիոն հոգու համար և 1932 թվի պլանի համաձայն յենթադրվում է կառուցել ելի 3 միլիոն հոգու համար:

Վճռական հաղթության և տարված դասակարգային թշնամու դեմ: Սոցիալիստական հաղթական հարձակման ընթացքում ամբողջ ֆրոնտի վրա լենինյան «ովկի ում» հարցը լիովին և անդառնալի կերպով կապիտալիզմի դեմ, հոգուտ սոցիալիզմի և վճռված թե քաղաքում և թե գյուղում:

Այդ հաղթանակներն արդյունք են պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության հեղափոխական ակտիվության ուժեղ վերելքի, արդյունք վեհԱՊԵ-ի (բ) լենինյան քաղաքականության, վորը բոլեիկան համառությամբ ու հետեւղականությամբ՝ Խորհրդային Միության պրոլետարիատի դասակարգային պայքար և ղեկավարել:

Կուսակցությունն այդ հաղթանակներին հասել և վճռական պայքար մղելով բուրժուական վերականգնողների բանակից դուրս յեկած վնասատուների և հականեղափոխական տրոցկիզմի դեմ մղված վճռական պայքարում, կուսակցությունը այդ հաղթանակները ձեռք է բերել յերկու ֆրոնտի վրա մղված պայքարում.—ներկա ետապում գլխավոր վտանգ հանդիսացող աջ սովորունիզմի և «ձախ» ծուռմների դեմ, կուսակցության հիմնական գծից յեղած թերություների վերաբերմասք հաշտվողականության դեմ մղած պայքարում: Խորհրդային Միության պրոֆմիությունների VIII համագումարից հետո անցած ժամանակաշրջանն էր կուսակցությունը սոցիալիստական ու կապիտալիստական սիստեմների մեծագույն պատմական ստուգման և մրցության ժամանակաշրջան և յեղել:

Այն ժամանակ, ինքը Խորհրդային Միությունը մեծագույն քաղաքական, տնտեսական և կուլտուրական հաջողություններ և ձեռք բերել, կապիտալիստական աշխարհը մեծագույն քայլաման դրության և հասել:

Ճգնաժամով և համակալած ամբողջ կապիտալիստական սիստեմը: Գործազրուրկների համաշխարհային բանակը հրեշտական և հասել—40 միլիոն հոգուց ավելի: Սուր կերպով իջեցնում են աշխատավարձն ու բանվորներին զրկում գործազրկության նպաստները:

Կապիտալիստական յերկրների ու գաղութների արդյունաբերության և գյուղական տնտեսության մեջ աշխատող տասնյակ ու հարյուր միլիոնավոր աշխատավորներն աղքատի կյանք վարելու և սովամայության են մատնված:

Ուժորմիստական պրոֆմիությունների ղեկավարությունը բոլոր յերկրներում դավանանում և բանվորների հեղափոխական կովին: Սոցիալ-ֆաշիզմը իմպերիալիզմի առաջավոր ջոկատ և դարձել գաղութային յերկրները կաշկանդելու և Խորհրդային Միության դեմ զինված հարձակում պատրաստելու գործում:

Մյուս կողմից, պրոլետարիատի արդյունաբերություն, վորպես միջազգային պրոլետարիատի միակ հայրենիքի շուրջը: Ամբողջ աշխատավոր բանվորների ավելի մեծ մասսաներ են անցնում կապիտալիստական հասարակակարգը հեղափոխականորեն ապալելու և պրոլետարիատի դիկտուրականության:

Հաշվետու ժամանակաշրջանը խոշորագույն ետապ ե հանդիսանում խորհրդային պրոֆշարժման զարգացման դրծում:

Սոցիալիստական ըեկոնստրուկցիան բանվոր դասակարգի բոլոր մասսայական կազմակերպությունների, ամենից առաջ պրոֆմիությունների շարքերի, աշխատանքի մեթոդների ու բովանդակության արմատական վերակառուցում և պահանջել՝ համաձայն ամբողջ ֆրոնտի վրա բոլշևիկյան հարձակում ծավալելու: Կուսակցության XV համագումարի վորոշումների հիմունքով, վորն սպառող լրիվությամբ վերակառուցողական ժամանակաշրջանում պրոֆմիությունների աշխատանքի խնդիրներն ու մեթոդներն ե վորոշել, Պրոֆմիությունների չամամիութենական կենտրոնական Խորհուրդն ու պրոֆշարժումն ամբողջությամբ վերցրած՝ խոշորագույն հաջողություններ են ո նեցել մասսաները սոցիալիստական շինարարության քաշելու և իրանց նյութական ու կուտարական սպառարկման բարելավման դրծում: Պրոֆմիություններում յեղած աջ ոպորտունիստական, արեգ-ունյիոնիստական տարրերի գաղափարական ու կազմակերպչական ջախջախումը, պրոֆապարատից պրոլետարիատին խորթ տարրերն արտաքսելու և այդ ապարատը հարվածային բանվորներով ու կուսակցական և պրոֆեսիոնալ ակտիվի լավագույն ներկայացուցիչներով ամբապնդելու պրոֆմիություններում կուսակցության գծի լինակատար և անպայման կենսագործումն ե ապահովել:

Դաժան պարքար մգելով ոպորտունիստների ու արեգ-ունյիոնիստական տարրերի գեմ՝ պրոֆմիությունները իրանց՝ «յերեսը գեպի արտադրություն» աշխատանքում արմատական շրջադարձ են կատարել:

Սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը պրոֆմիությունների ամբողջ աշխատանքն աշխատացնելու և բարեկավելու հիմնական ողակ են դարձել արդեն: Պրոֆմիությունները կուսակցության գեղավարությամբ՝ հարվածայինների առաջավոր շարքերը, նրանց հետ ել բանվորների մյուս մասսաները տարել են դեպի սոցիալիստական հարձակում, հնդամյակը չորս տարում իրագործելու համար:

Սոցիալիստական մրցությունը մի հզոր ուժ է դարձել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, բանվորնե-

րի սոցիալիստական դաստիարակության և ամենալայն մասսաները տնտեսական կառավարման գործի մեջ քաշելու ասպարեզում: Հարվածայինը արտադրության և պրոֆշարժման կենտրոնական դեմք է դարձել:

Հաշվետու ժամանակաշրջանում պրոֆմիությունները շատ խոշոր դեր են խաղացել գյուղական տնտեսության կոլեկտիվացման և սովորողների ու ՄՏԿ-երի շինարարման գործում (25)-հազարականների մոբիլիզացիա, շեֆային բրիգադներ ուղարկել պրոֆկազմակերպությունների ամրապնդում գյուղում:

Պրոֆմիությունների յերեսը գեպի արդարություն դարձնելուն, հակառակ աջ ոպորտունիստների պնդումներին, ուղեկցել ե բանվորական մասսաների նյութական դրության և կուլտուրական մակարդակի հետագա աճումը:

